15-21 ՄԱՅԻՍ 2026 ՈՒՐԲԱԹ 017(5885)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«Արեւմտյան Ադրբեջան» մտացածինի շուրջ արդեն հիշողության մշակույթ են ձեւավորում

Շվեդիայում Ադրբեջանի դեսպան Զաուր Ահմադովը առանձնահատուկ «նվեր» է մատուցել Հեյդար Ալիեւի 103-րդ ամյակին՝ Ստոկհոլմում Filmstaden Sergel կինոթատրոնում մայիսի 11-ին առաջին անգամ ցուցադրվել է շվեդ ռեժիսոր Միքայել Սիլքեբերգի (Mikael Silkeberg) «Հայրենիք՝ հիշողությունների մեջ» (Homeland Living in Memories") 60 րոպեանոց վավերագրությունը, որ դեսպանի բնորոշմամբ, հինգերորդ ֆիլմն է, որ ծառայում է Ադրբեջանի միջազգային քարոզչությանը: Հ-ի կարճ գրառումը լրացնում է «Ազերթաջի» տեղական թղթակցությունը՝ Սիլքեբերգի մեկնաբանությամբ՝ «ֆիլմը նվիրված է ադրբեջանցիների մշակութային հարուստ ժառանգությանը, նրանց, որ հարկադրված լքել են Արեւմտյան Ադրբեջանը եւ դրա մասին հիշողությունը պահպանել նաեւ հայրենիքից հեռու՝ արվեստում եւ ավանդույթների մեջ: Ցայտուն օրինակ են իրեւանյան գորգերը»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Նախընտրական Հայաստանը՝ չարամետ օղակում

Արտաքին ուժերի չափազանցյալ հետաքրքրվածությունը, իսկ ոմանց շահագրգռվածությունը խորհրդարանական առաջիկա մեր ընտրությունների նկատմամբ՝ կարող է, թերեւս, մեզնից ոմանց մոտ ազգային սնապարծություն առաջացնել: Կոմպլեքսավորված ազգ ենք՝ հիվանդագին բարդույթներով տառապող պետական ղեկավարությամբ: Մեզնով հետաքրքրվում են, զբաղվում, մեր մասին գրում, վերլուծում, ենթադրությունն են անում, ռեյտինգներ ներկայացնում: Ի՞նչ վատ է որ...

Դեռ 6-7 օր առաջ էր. Եվրոպայի շեֆերը, երեւի չգտնելով հարմար մի այլ վայր ողջ ցամաքամասում՝ Երեւան էին եկել իրենց 8-րդ համաժողովն անցկացնելու: Ոչ միայն իրենք, այլեւ Կանադային էլ էին բերել իրենց հետ՝ երեւի ՆԱՏՕ-ում նախագահ Թրամփի մենատիրության դեմ պատվար կանգնեցնելու: Ավելին՝ արկածախնդիր պոպուլիստ Զելենսկուն էլ քարշ էին տվել Երեւան, որպեսզի Մոսկվայի Կարմիր հրապարակը ռմբակոծելու սպառնալիքով վախեցնի Ռուսաստանին, հատկապես նախագահ Պուտինին: Ժողովականները, միաժամանակ, ցանկացել էին չհոխորտալու, չքրփոշանալու ազդանշաններ ուղարկել Թեհրան, որին այսքան ժամանակ չեն կարողանում ծնկի բերել Իսրայելն ու նրա կամակատար Մ. Նահանգները:

Եվրոպացիների հայաստանյան կամպանիայի գլխավոր խնդիրն այլ էր սակայն. պոկել Հայաստանը ռազմավարական իր դաշնակից Ռուսաստանից ու դրանով՝ ռուսներին ամբողջովին վանել Կովկասից, առաջին հերթին վերացնել 102-րդ ռազմաբազան, որը, եթե չեմ սխալվում, վերջինն է նրա արտասահմանյան հենակետերից, որտեղ, ի դեպ, ծառայում են նաեւ հայ զինծառայողներ: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է առ ոչինչ հայտարարել 1992-ին ՀՀ հիմնադիր նախագահի՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի 45 տարով կնքած պայմանագիրը, ապա, զուգահեռաբար, մեր երկիրը դուրս հանել ՀԱՊԿ-ից՝ Հավաքական անվտանգության համակարգից, որի երդվյալ հակառակորդն ի սկզբանե Փաշինյանն է եղել, որի «հերոսական» առաջին գործերից մեկը, Սահմանադրական դատարանը գլխատելուց հետո, ինչպես հիշում ենք, եղավ ՀԱՊԿ պետի պաշտոնում գտնվող Գեներալ լեյտենանտ Խաչատուրովի դեմ «քրեական» գործ հարուցելը, վարկաբեկելով այդ ողջ կառույցը, միաժամանակ ի կատար ածելով իրեն նշանակողների հանձնարարությունը:

Եվրոպացիների երեւանյան հավաքի գլխավոր խնդիրներից մեկն էլ հավերժացումն էր իրենց դրածոյի պաշտոնավարության, հունիսյան ընտրություններից քիչ առաջ: Լռությամբ համաձայնվելով Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանի եւ Ադրբեջանի նախագահ Ալիեւի հայտարարություններին՝ նրանք, եվրոպացիները, փաստորեն կրկնած են լինում նրանց «կա՛մ Փաշինյան, կա՛մ պատերազմ» սպառնալիքները, ինչը, համենայնդեպս, թողնում է տպավորություն մեր որոշ ընտրողների վրա, որոնց միանում են այն մյուսները, որոնք տպավորված են հավաքի մասնակիցների թվով եւ անուններով: Այսօր շատերն են կրկնում. «Ուրիշ ո՞վ կարար էդքան մարդ բերել», առանց անգամ հասկանալու, թե այդ բերվածները ի՞նչ են բերել կամ բերելու մեր գլխին:

Եվրոպական այդ խճողակի ներկայությունը, մյուս կողմից, զգուշացնում է ընդդիմադիրներին, որ իրենք ծպտուն չեն հանելու, երբ իրենց դրածոն կրկին ու կրկին շարունակի խախտել ընտրությունների մասին օրենքը, միջազգային բոլոր կանոնները, նորից մոլեգնի իր շահատակությունների, բռնարարքների մեջ:

Ահա՛ այսպիսի պատկեր, դժխեմ ու մտահոգիչ, բարեկամներից ու թշնամիներից սպասվող անտարբերության, խարդավանքների, դավաճանության ու հարվածների մի ողջ համալիր, որը լավագույնս է բնորոշվում միջազգային բառարանի՝ «vicious circle»՝ «չարամետ օղակ» արտահայտությամբ:

Այդ օղակը չի ստեղծվել ինքնաբերաբար: Թե ո՞վ եւ ովքե՞ր են ստեղծել, ինքներդ ասեք:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

«Ի՞ՆՉԻՊԻՍ, ՓՐԿԻՉ, ՓՈՂԱՀՈՏ ՎԻՃԱԿՆԵՐ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մեր այս հրապարակումը պատրաստելու ժամերին Պեկինում երկու գերտերությունների ղեկավարները աշխարհի խնդիրներն էին քննարկում, ու հավանաբար մեր տարածաշրջանի համար եւս հարցեր էին վճռում Թրամփն ու Սին Ծինփինը, որոնք հետեւանքներ են թողնելու բոլորի վրա: Իսկ Հայաստանում անխռով ընթանում էր նախընտրական քարոզարշավը, որը տեւողության առումով դեռ կես չի ընկել, բայց հասցրել է բոլորին հոգնեցնել եւ ուրվագծել այն սխեմաները, որոնց մեջ փորձում են տեղավորվել ընտրական ընթացքի մասնակից 17 կուսակցությունն եւ 2 դաշինքը:

Նախ այդ թվով ուժերի մասնակցությունն արդեն ընտրողի հանդեպ դավադրություն, նրան շփոթեցնելու հանգամանք է, մանավանդ՝ նրանցից շատերին ընտրողը պարզապես չի էլ ճանաչում, ու նրանք քարոզարշավն են հենց առիթ դարձրել՝ մարդկանց հետ ծանոթանալու համար:

⇨2

Գաղտնի այցեր եւ հարվածներ. ինչպես ԱՄԷ-ն ու Սաուդյան Արաբիան ներգրավվեցին Իրանի դեմ պատերազմում

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

Մայիսի 13-ին Իսրայելի վարչապետի գրասենյակը տեղեկացրել է, որ Նեթանյահուն Իսրայելի ներգրավմամբ Իրան-ԱՄՆ պատերազմի ամենաթեժ օրերին գաղտնի այց է կատարել Արաբական Միացյալ Էմիրություններ եւ հանդիպել ԱՄԷ նախագահ Մ**ոհամմեդ բին Զայեդ ալ Նահյանի** հետ:

Նեթանյահուի գրասենյակի գնահատմամբ՝ այցը երկկողմ հարաբերություններում «պատմական առաջընթաց» է արձանագրել: Գրասենյակը, սակայն, մանրամասներ չի տրամադրել այցի ճշգրիտ ժամանակացույցի կամ հնարավոր համաձայնությունների մասին:

Ի լրումն Իսրայելի վարչապետի գրասենյակի տարածած տեղեկատվության՝ Reuters-ն էլ իր հերթին հայտնել է, որ ԱՄԷ-ն ռազմական հարվածներ է հասցրել Իրանին: Reuters-ը, հղում անելով «Wall Street Journal»-ին, գրել է, որ Սաուդյան Արաբիայի եւ ԱՄԷ-ի գործողությունները վկայում են տարածաշրջանային հակամարտության լայնածավալ բնույթի մասին, մինչդեռ դրա վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը դեռեւս ամբողջական չէ:

Այսպիսով, պարզ է դառնում, թե ինչու էր Իրանը պատերազմի ամենաթեժ օրերին նախագգուշական հարվածներ հասցնում ԱՄԷ-ին:

Դրա մասին է վկայում նաեւ «Wall Street Journal»-ի բացահայտումը, ըստ որի՝ Իրանն այդ օրերին հակահարված է հասցրել՝ բալիստիկ հրթիռներ եւ անօդաչու թռչող սարքեր արձակելով ԱՄԷ-ի ուղղությամբ:

Իրանի դեմ Իսրայել-ԱՄԷ համագործակցության մասին է վկայում նաեւ լրատվական գործակալությունների բացահայտած այն փաստը, որ Վաշինգտոնը գաղտնաբար ողջունել է ԱՄԷ-ի ներգրավումը ռազմական գործողություններին:

Թերթը նաեւ նշել է, որ Իրանը ԱՄԷ-ին թիրախավորել է ավելի ինտենսիվ, քան որեւէ այլ երկրի: Ըստ հրապարակման՝ Իրանը ԱՄԷ-ի ուղղությամբ արձակել է ավելի քան 2800 հրթիռ եւ անօդաչու սարք:

Հաղորդագրության համաձայն՝ հարձակումները զգալի վնաս են հասցրել ԱՄԷ-ի տնտեսությանը եւ հանգեցրել որոշ ոլորտներում աշխատեղերի կրճատման:

Աղբյուրների փոխանցմամբ՝ այս հարձակումները նաեւ հիմնարար փոփոխություններ են առաջացրել ԱՄԷ-ի ռազմավարական ընկալումներում: Աբու Դաբին այժմ Իրանը դիտարկում է որպես սպառնալիք իր տնտեսական եւ սոցիալական մոդելի համար, որը հիմնված է անվտանգության, կայունության եւ օտարերկրյա աշխատուժի ներգրավման վրա:

ԱՄԷ-ի արտաքին գործերի նախարարությունը չի արձագանքել այդ տեղեկություններին, սակայն հղում է կատարել նախկին հայտարարությանը՝ ընդգծելով, որ Աբու Դաբին իրեն իրավունք է վերապահում արձագանքել թշնամական գործողություններին:

Բացի այդ, Reuters-ը, հղում անելով երկու արեւմտյան եւ երկու իրանցի պաշտոնյաների, օրերս բացահայտել է նաեւ, որ Սաուդյան Արաբիան Իրանի հարձակումներից առաջ՝ մարտի վերջին, մի քանի չհայտարարված ավիահարվածներ է հասցրել Իրանի տարածքում գտնվող թիրախներին:

Ըստ հաղորդագրությունների՝ այդ հարվածներն իրականացվել են ի պատասխան Սաուդյան Արաբիայի դեմ Մերձավոր Արեւելքում ընթացող ռազմական գործողությունների ընթացքում իրականացված հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի հարձակումների:

Նշվում է նաեւ, որ սա Սաուդյան Արաբիայի առաջին հայտնի ուղիղ ռազմական գործողությունը տեղի է ունեցել Իրանի ուղղությամբ:

Reuters-ի փոխանցմամբ՝ հարվածները հասցրել են Սաուդյան Արաբիայի ռազմաօդային ուժերը, սակայն թիրախների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարակվել:

⇨7

«Մենք այսօր իսկ գտնվում ենք ցեղասպանական գործընթացի մեջ», ահազանգում է Գառնիկ Քերքոնյանը

«Մեր մոտեցման ամենամեծ սխալն այն է, որ մենք առանձին դեպքերը քննում ենք առանձին կերպով եւ չենք հասկանում, որ մենք ցեղասպանության ընթացքի մեջ ենք»,- շեշտեց ամերիկահայ իրավաբան եւ միջազգային իրավունքի փորձագետ, Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության կոմիտեի անդամ **Գառնիկ Քերքոնյանը** ապրիլի 11-12-ը Փարիզում կայացած Սփյուռքի ազգային զորաշարժին նվիրված խորհրդաժողովի ընթացքում, ինչպես նաեւ Ապրիլ 24-ին նվիրված փարիզյան ԱՅԲ FM ռադիոկայանի հաղորդման զրույցում: Ըստ նրա, համիդյան կոտորածները, 1950-60 թթ ստամբուլյան դեպքերը, Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի կոտորածներով եւ Արցախի ցեղասպանության, բոլոր այս դեպքերը միմյանց հետ փոխկապակցված են: *«1915 թ մայիսի երկրորդ կամ երրորդ շաբաթն էր,-* պատմում է Քերքոնյանը,- *եւ 12 տարեկան պապս, որն Այնթապում էր ապրում, սկսեց տեսնել Մարաշից ժամանող ընտանիքներ՝ 100 ընտանիք, 200 ընտանիք, 1000 ընտանիք: Եվ քանի որ նրա հայրը կոշկակար էր, կոշկակարները միավորվում են եւ սկսում են կարել կաշվե ջրի տոպրակներ ու բաժանել դրանք մարաշցի այդ ընտանիքներին: Ինչո՞ւ այս պահին այս պատմությունը կարեւոր է: Որովհետեւ 12 տարեկան պապս դիտում էր ցեղասպանության շարժումը՝ ուղղակի անապատ քշվող մարաշցի ընտանիքներին, եւ այն իբրեւ դեպք էր ընկալում, իբրեւ մի դեպք: Դժբախտաբար, ցեղասպանությունը դեպք չէ, գործընթաց է: Եվ ինքը՝ այնթապցի հայ լինելով, չէր հասկանում դա, եւ ինձ այն ժամանակ ասում էր, որ՝ չէի՛նք երեւակայում, որ մենք հաջորդն ենք լինելու: Չէ՛ր հավատում դրան: Ինչո՞ւ չէր հավատում: Որովհետեւ երբ որ մարդ մի փորձառություն է ունենում, այդ փորձառությունը ընկալում է իբր դեպք եւ ոչ իբրեւ գործընթաց: Դժբախտաբար, ցեղասպանության ծրագիրը գործընթաց է, եւ դեպք չէ: Երբ որ պատմաբանները վերադառնան այս 100 տարվա պատմության, զանազան հոդվածներով դրանց չեն անդրադառնալու, այլ՝ գիրքի մեջ երկու-երեք էջնոց պատմություն կլինի դա: Եվ ի՞նչ կտեսնենք. այդ գործընթացի շարանը կտեսնենք, շարքը կտեսնենք»:*

⇨3

«Իֆիբիր», փրկիչ, փողահոս վիճակներ

⇨1 Երկրորդ՝ եթե այդ «անճանաչների» մասնակցությունը միայն նրա համար է, որ հիմնական քաղաքական ուժերին ավելի տեսանելի դարձնեն, իսկ իրենք ընտրաքվեների որոշակի քանակություն փոշիացնեն, ապա դա ստացվում է՝ ընտրաքվեների շատ թանկարժեք /ուղիղ եւ փոխաբերական առումով/ ինչ-որ քանակություն կորչելու է, նախապես ավելի կոշտ եւ անկառավարելի դարձնելով ընտրության մոտիկ օրերին հիմնական ֆավորիտ քաղաքական ուժերի բառապաշարն ու դիմակայությունը, իսկ միգուցե նաեւ՝ հետընտրական զարգացումները:

Իսկ քարոզչական միամսյակի առաջին քառորդի ընթացքում ավելի խտացված ու ցայտուն տեսանք ու տեսնում ենք այն քարոզչական նեգատիվը, որ վերջին ութ տարին մեր քաղաքական ուժերը շպրտել են իրար եւ հանրության վրա՝ դիմակայության, սեւ-սպիտակի, միմյանց ոչնչացնելու սխեմայով: Հիմա դա ավելի բյուրեղացված, ավելի հնարամիտ կաղապարված ձեւով է տեղում ընտրողի վրա այս կլիշեով՝ վիզաների ազատականացո՞ւմ, թե՞ միութենական պետություն, պատերազմ, թե՞ խաղաղություն, թալանչիների՞, թե՞ թալանի վերադարձ, եւ այլն:

Այն, ինչից հոգնել էր մեր հանրությունը եւ կուզենար առաջիկա հինգ տարին հեռանալ այդ բոլորից, այժմ փաստորեն նորից է առաջարկվում նրան՝ նախ քարոզարշավի,ապա հավանաբար խորհրդարան անցնելիք երեք-չորս ուժերի տեսքով, եւս հինգ տարի, պրծում չկա: Սխեման անցյալ երեսուն տարվանն է՝ ոչինչ նոր, միմյանց մեջ բաժանված քաղաքատնտեսական արիալ, որում լայնորեն ներկայացված են արտաքին ազդեցությունները, տեղական կլանների շահերը, վերջին իշխանության բնագծերը, իսկ ընտրողին, ինչպես եւ առաջ, հատկացված է «մասսովկայի» դերակատարում, ոչ ավելի: Անցյալի քաղաքական սխեմաները կոտրելու համար պետք էր ոչ թե արհեստական քաղաքական միավորներ ստեղծել ընտրությունների նախաշեմին, որոնց լիդերները ընտրողին են ներկայանում իբրեւ մի «քինդեռսյուրպրիզ»՝ բրադեռս Սարգսյաններից մինչեւ ԴՕԿ, այլ արդեն տարիներ ե'ւ իշխանությունը, ե'ւ ընդդիմությունը պիտի չխանգարեին իրենց իրական ժառանգորդների առաջացմանը, եթե իրոք երկրի մասին մտածում էին, դա կլիներ բնականոն զարգացման ընթացք, մինչդեռ նրանք հակառակն արեցին:

Այսպիսով՝ մեր իշխանությունն ու ընդդիմությունը այլընտրանքի հնարավորություն չեն առաջարկում հանրությանը, նրան ստիպելով ընտրություն կատարել առկա համակարգով: Ընտրության մասնակից ուժերի մեջ մենք տեսանք, որ միայն մեկ գործիչ /Սուրեն Պետրոսյանը/ է խոսում այդ մասին, չնայած կա նաեւ «Բոլորին դեմ եմ» անվանումով ընտրության մասնակից, իսկ մնացածը բոլորն ընդունել են խաղի կանոններն ու ընդամենն ուզում են իրենց դերակատարությունը հին սխեմայում: Ու այդ հնարավորությունը, բնականաբար, հին սխեմայի հիմնական դերակատարներն ունեն, որքան էլ ցավով արձանագրենք դա, 19 ուժից մեկ տասնյակից ավելին ընդհանրապես իզուր է ասպարեզ նետվել, նյութական ռեսուրս ծախսում եւ քարոզչական ժամանակ կլանում: Ռոբերտ Քոչարյանի, ՀՀԿ-ամերձ կարապետյանական, ու այս երկուսին էլ նման ծառուկյանական ուժերն են սխեմայի գլխավոր դերակատարը, ինչպես նաեւ իշխանությունը, որը նույնպես հին սխեմայի աենագլխավոր դերակատարն է դարձել այս ութ տարում: Նրանց բոլորի պայքարը սխեմայի ներսում է՝ իշխանությունն ուզում է մնալ ղեկին, ու դրա համար արել ու անում է ամեն ինչ, դրա համար նա ունի ամեն ինչ՝ իշխանություն լինելու գերադասությունը, իրավական եւ ուժային լծակներ, անցյալից որոշ տոկոսով դեռ մնացած անօրինակության դեմ պայքարելու կերպար/թե բա՝ Կարապետ Գուլոյանի տունն է պետականացվել էս նախընտրական մաջալին/: Գումարած՝արտաքին պայմանավորվածություններ, հայ-թուրքական սահմանին առեւտրի սահմանափակումների վերացումը մեկ օր առաջ հապացույց, այսպիսի բաների էլի սպասեք՝ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանի քաջալերող հայտարարություններով, ու այս շարքում մեր «քյարը» Ալիեւի՝ գերիներին բաց թողնելը կլիներ/իմ բարեկամ Դավիթ Բաբայանի ձայնային հաղորդագրությունը Բաքվի բանտից փախցնի բոլորիդ քունը, հա/ ...

Ընդդիմադիր երեք հիմնական միավորները եւս պատրաստ են անել ամեն ինչ՝սխեման պահպանելու, ավելին՝ սխեմայի ներքին ուրվագիծը փոխելու եւ իշխանությանն ընդդիմություն դարձնելու համար, անկախ նրանից վերջնարդյունքում դա տեղի կունենա, թե ոչ:

Ընտրության մասնակից մի քանի այլ ուժեր, որոնց միայն լիդերներն են հայտնի հանրությանը, փաստորեն ոչ մի շանս չունեն հայտնվելու խորհրդարանում, ու երբեմն կարելի է ափսոսալ այն մի քանի որակյալ հանրահայտների համար, որոնք մարդկուսակցություն սխեմայով մասնակցելով ընտրություններին՝ավելի գորշ զանգված պարունակող ընդհանրական սխեմայից դուրս են մնալու եւ անցնեն պատմության գիրկը:

Կկարողանա՞ վերարտադրվել այս իշխանությունը, թե ոչ, շատերի համար պարզ է այս գլխից, դիմակայության նոր քարոզչական երանգներ կիրառող ընդդիմությունն էլ իր մեծ հույսերն ունի, ընդ որում՝ նրանցից յուրաքանչյուրը պայքարում է դոմինանտության համար մյուսների հանդեպ:

Բայց սթափ մարդիկ հասկանում են, որ աշխարհում կատարվող սրընթաց, երբեմն անսպասելի փոփոխությունների պայմաններում հնացած սխեմաները միշտ երկրի արգելակ են, ու ոչ ոք չգիտե, թե մեր նոր ընտրական պատկերի հաստատումից տարիուկես, երկու տարի հետո ինչ կլինի, չե՞ն կրկնվի արդյոք «հայտնի ուժերի ազդեցությամբ» կամ «ավելի հզոր ուժերի պարտվելու» նախադեպերը, երբ նոր իշխանության կարգախոսները, պարտավորություններն ու համաձայնությունները հնացած ու ժամանակավրեպ կդառնան, քանի որ այլ երկրներում իշխանություններ եւ աշխարհում առաջնահերթություններ կփոխվեն, երբ աշխարհի նոր առաջնահերթություններն, ասենք, վերարտադրված մեր իշխանության հագով չեն լինի, ու չեն լինի առկա բոլոր քաղաքական ուժերի հագով, նոր մարտահրավերներին դիմակայող ժառանգորդներն էլ ստեղծված չեն լինի:

Ես որպես քաղաքական լրագրության հնաբնակ երեսուն տարուց ավելի քաղաքական դաշտում տեսնում եմ նույն դեմքերին, նույն կլաններին, որոնց շուրջ անգամ եթե նոր դեմքեր էլ կան, ապա նորոգելու, թյունինգ անելու համար միայն հին, ամեն ինչ իրար մեջ բաժանած կլաններին:

Ես նրանց բոլորին ասում եմ՝ Հայաստանը նրանց հայրենիքը չէ միայն, այլ նախ՝ իմը, իմ նման շատերինը, հասարակ ընտրողինը, հայրենիքը ոչ ռուսամետներինն է, ոչ եվրոպամետներինը կամ արեւմտամետներինը, ոչ պուտինասերներինը, ոչ էլ թրամփասերինն ու կալլասասերներինը: Սա Աստծո երկիրն է, այստեղից են դուրս եկել Թրամփի, Կալլասի, Կոշտայի, Պուտինի ու Զելենսկու հեռավոր նախնիները, ես երկիր չունեմ ոչ մեկի ոտքի տակ դնելու: Կուզեի այս երկրի՝ խորքերում թաքնված եւ առկա համակարգով ճզմված ներուժը վերջապես կայանար, դուրս գար առկա սխեմաներից, «իքիբիր», փրկիչ, փողով ընտրելու, օլիգարխատ սպասարկելու վիճակներից եւ հենց ընտրությունների հաջորդ օրվանից սկսեր կայանալ, ստեղծեր աշխարհի մարտահրավերներին դիմակայող զսպանակ, քանի որ անկախ նրանից, թե ո՞վ կլինի իշխանություն, մեր երկիրն արժանի է աշխարհի մարտահրավերներին մրցունակ նոր սերնդի, որը ռուս պաշտոնյաների սպառնալիքներին, եվրոպական եւ ամերիկյան մտրակին ու քաղցրաբլիթներին դիմակայելու համար կունենա խելք, դիվանագիտական պատրաստվածություն ու ճկունություն, պրոֆեսիոնալիզմ եւ խորքային հայրենասիրություն/ դուք տեսե՞լ եք ուրիշ մի երկրի իշխանություն, որ կոստյումին սեփական երկրի քարտեզի սուվենիր կպցնի/:

Որպեսզի գոնե նոր արտահերթ կամ հերթական ընտրություններին մարդու մոտ չառաջանան այս կարգի հարցեր՝ ի՞նչ է անում Սուրեն Սուրենյանցը Ծառուկյանի կողքին, էդմոն Մարուքյանը հիմա վարչապետի թեկնածո՞ւ է, թե արդարադատության նախարարի, ո՞ւմ թեւերն է Արման Թաքոյանը, ի՞նչ տարբերություն ՕԵԿ-ի բաժանած ջեմի ու Փաշինյանի բաժանած «պեչենու» միջեւ, «քոչվելու ու քոչացնելու» տարբերությունը ո՞րն է ընտրողի համար, հախՏանակն է ճիշտ, թե՞ հաղթանակը, Վաղարշակ Հարությունյանը ռեֆորմի՞ստ է եղել-չենք իմացել, , Լեւոն Զուրաբյանին տեսնես ի՞նչ է եղել, որ սկսել է նանոտեխնոլոգիաներից խոսել, եւ այն:

Հ.Գ.- *Մնացել ենք նախընտրական ցնցաքարոզների տակ ու շատ կարեւոր բաներ չենք նկատում/այդ մասին՝ հաջորդիվ/, բայց մեկը մատնանշեմ:*

Հայաստանում ընտրողների թիվ է հայտարարվել 2,482,872-ը: Հա՞: Բայց նայեք՝ աշխարհում համարվում է, որ ընտրողները սովորաբար կազմում են բնակչության 70 տոկոսը միջինում: Ո՞վ է մաթեմատիկայից ուժեղ, հաշվեք, ու կտեսնեք, որ մի 300 հազար այսկողմ-այնկողմ է՝հաշիվ կա՞ մեջը:

Արձագանմեր Երեւանի եվրոգագթնաժողովներին

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Վերջերս մեր «ռազմավարական գործընկերների» թիվը սկսել է աճել, բայց դրանից դեռ առանձնապես բան չի փոխվում: Ահա այդպիսի մի հզոր տերությունում՝ ԱՄՆ-ում լույս տեսնող «Վաշինգտոն փոստ» հեղինակավոր օրաթերթը, անդրադառնալով մայիսի 4-ից 5-ը Երեւանում կայացած՝ Եվրոպայի քաղաքական համայնքի 8-րդ եւ ԵՄ-Հայաստան գագաթնաժողովներին, գրելով, թե դրանք ընդգծում են դեպի Արեւմուտք դառնալու եւ Ռուսաստանի ազդեցությունից ազատվելու Հայաստանի ձգտումը, տեսեք ինչպես է արտահայտվում Արցախի ողբերգության մասին:

«Հայաստանի հարաբերությունները Մոսկվայի՝ իր վաղեմի հովանավորի եւ դաշնակցի հետ,- գրում է թերթը,- ավելի ու ավելի են լարվել 2023 թվականից ի վեր, երբ հարեւան Ադրբեջանն ամբողջովին վերադարձրեց Ղարաբաղը եւ վերջ դրեց էթնիկ հայ անջատողականների տասնամյակներ տեւած կառավարմանը»... Մեկնաբանությունները, թվում է, ավելորդ են:

Իսկ թե երեւանյան այդ գագաթնաժողովները, որոնք միջազգային մամուլի ուշադրության ոլորտում էին հիմնականում կայացման օրերին, վերջին հաշվով որեւէ բանով կօգնե՞ն մեր երկրին, գուցե ցույց կտա ժամանակը: Ամերիկյան հիշյալ լրատվամիջոցը նշում է, թե եվրոպական հանդիպումների միջազգային ազդեցությունից կարող է քաղաքական օգուտ քաղել 2018-ից երկրի ղեկին գտնվող, առաջիկա հունիսյան խորհրդարանական ընտրություններին սպասող Նիկոլ Փաշինյանը: Եվրոպական մամուլի ամենօրյա տեսություն «eurotopics»-ն էլ իր հերթին նկատում է, թե միակ ակնհայտ թվացող բանն այն է, որ այդ «եվրոպական բենեֆիսը Երեւանում պետք է հզոր աջակցություն դառնա վարչապետ **Փաշինյանի** նախապատրաստությանը Հայաստանի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին: Եթե նրա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հաջողության հասնի ռուսամետ ընդդիմությանը հաղթելու հարցում, շարունակում է կայքը, եվրոպական ինտեգրման ուղին կշարունակվի, ինչպես եւ՝ Ռուսաստանից հեռանալու միտումը»:

Համանման նկատառում կա նաեւ այլ լրատվամիջոցներում:

Նշված տեսության մեջ բերված բեռլինյան «**taz**» թերթի մեկնաբանությունում նաեւ տրվել է Երեւանի եվրոպական երկու գագաթնաժողովների գնահատականն ընդհանուր առմամբ. «Եվրոպան ցուցադրեց իր ներկայությունը, բայց նա ռազմավարություն չունի ... Սա անհարմար ճշմարտությունն է՝ թաքնված երեւանյան գեղեցիկ պատկերի ներքո. սիրուն կուլիսներ, բարձրագոչ խոսքեր, բայց քիչ բովանդակություն: Դիվանագիտությունը գալիս ու գնում է, իսկ ահա մարտահրավերները մնում են»:

Հակառուսական լոգիստիկ երթուղիների հաստատումը եւ գագաթնաժողովում **Զելենսկու** ներկայությունը ապացուցում են, որ Արեւմուտքն օգտագործում է Փաշինյանին՝ Ռուսաստանի սահմաններին նոր լարվածություն ստեղծելու համար, գրում է իտալական «**L AntiDiplomatico**»-ն: «ԵՔՀ գագաթնաժողովը,- ասում է հոդվածի հեղինակը,- Ռուսաստանի ծայրամասում հակամարտություններ ստեղծելու Արեւմուտքի ավելի լայն ռազմավարության մի մասն է»: Բերվում է քաղաքագետ **Սեմյոն Ուրալովի** կարծիքը մասնավորապես այս մարտավարության մեջ ներառված «Թրամփի ուղու» մասին, ըստ որի սա Իրանին շրջապատելու եւ Ռուսաստանի սահմաններին տեղական պատերազմներ ու հակամարտություններ հրահրելու ծրագրերի մի մասն է: Զելենսկու այցն էլ Երեւան՝ ապացուցում է, որ

Հայաստանն ու Ուկրաինան օգտագործվում են հակառուսական ընդհանուր դավադրության մեջ»: Ավելացվում է նաեւ բրիտանացի մեկնաբան **Ստյուարտ Դոուելի** կարծիքը, թե Հայաստանը «հեշտ որս» է եվրոպական էլիտաների կողմից Կովկաս մուտք գործելու փորձերի համար:

Եվրոպական այս հավաքով ոգեւորված չէ նաեւ սլովակյան «**Պրավդա**» թերթը, որի հրապարակումից բերենք մի հատված: «Մերձավոր Արեւելքի ճգնաժամը լիովին բացահայտեց, որ Եվրոպան եւ ԵՄ-ն ոչ մեկին չեն հետաքրքրում: Եվրոպական տնտեսությունը փլուզվում է, մեկ ճգնաժամը հաջորդում է մյուսին, մինչդեռ ամերիկյան եւ չինական տնտեսություններն աճում են: Չգտելով թաքցնել իրենց հեղինակության ակնհայտ անկումը, մեր առաջնորդները Հայոց Երեւանում հակագրոհի են անցել: Որեւէ մեկն արդեն լսե՞լ է Եվրոպական քաղաքական համայնքի մասին: Հավանաբար՝ ոչ շատերը: Դրա ստեղծումը նախաձեռնել է Ֆրանսիայի նախագահ **Էմանուել Մակրոնը** չորս տարի առաջ՝ Ուկրաինայում Ռուսաստանի հատուկ գործողության սկսվելուց հետո: Արդեն մի քանի գագաթնաժողովներ են տեղի ունեցել, բայց դրանցից ոչինչ հիշվող չի մնացել... Հակասական է, որ սրան մասնակցում են ոչ միայն եվրոպացի առաջնորդները, բայց չկա Ռուսաստանը»:

Այժմ Եվրոպան ուզում է նորից աշխարհին պարտադրել որոշակի գաղափարախոսություն (ըստ **Ուրսուլա ֆոն դեր Լայենի**՝ «Եվրոպան միայն աշխարհագրական հասկացություն չէ, այլ նաեւ արժեքներ»), բայց, նշում է թերթի մեկնաբանը, այդ երբվանի՞ց է, օրինակ, Ադրբեջանը ժողովրդավարական պետություն... Անվտանգության համաշխարհային ճարտարապետությունը, եզրափակում է կայքը, փլատակների մեջ է, բայց Եվրոպայի համար հիմնական սպառնալիքը Ռուսաստանը, Չինաստանը կամ Դոնալդ Թրամփը չեն, այլ նրա թույլ, անօգնական առաջնորդներն են, որոնք Եվրոպան տարել են այս ճահճի մեջ: Իրենց համարձակ գաղափարներով՝ առանց իրական տնտեսական հիմքի, նրանք հիշեցնում են Դոն Կիխոտին, իսկ Ուրսուլա ֆոն դեն Լեյենի ծրագրավորված արտահայտությունների կրկնությունը կամ **Կայա Կալլասի** «փիլիսոփայությունը» կրկին արթնացնում են կոմունիզմի ավարտի մասին հիշողություններ:

Անշուշտ, արձագանքները միայն բացասական չեն: «**Եվրոնյուզ**»-ն, օրինակ, նշում է նաեւ, թե Երեւանում տեղի ունեցան խիստ բովանդակալից քննարկումներ, որոնք արտացոլում էին մայրցամաքում առկա ցնցումներն ու անհանգստությունները: Այս եվրոհավաքի մասին հրապարակումը վերնագրված է «Հայաստանում ԵՔՀ գագաթնաժողովի վեց աչքի զարնող պահերը»: Որպես այդպիսիք նշվել են «ներկա պահի պահանջված առաջնորդ», Գերմանիայի կանցլեր **Ֆրիդրիհ Մերցի** «աչք ծակող» բացակայությունը, փոխարենը առաջին ոչ եվրոպացի առաջնորդ, Կանադայի վարչապետ **Մարկ Քարնիի** հրավիրյալ ներկայությունը, Զելենսկու խորհուրդը՝ լավ կլիներ մշակել միասնական եվրոպական տեսակետ Ռուսաստանի հետ բանակցությունների համար, **Մեցոլայի** «պատասխան հարվածը» եւ այլն:

Ահա թվարկվածներից վերջինի մասին հատվածը: «Մեծ մասամբ ԵՀՔ-ում թագավորում էին ժպիտներն ու ձեռքսեղմումները, սակայն եղան նաեւ կարճատեւ լարվածության պահեր: Այդպես տեղի ունեցավ առավոտյան նիստի ժամանակ, երբ հավաքված հյուրերին ուղղված իր հեռավար ելույթում Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը** հարձակվեց Եվրոխորհրդարանի վրա՝ իր երկրի մասին, նրա արտահայտությամբ, «զրպարտություն եւ ստեր» տարածելու համար: Ալիեւը կազմակերպությանը դատապարտեց Ադրբեջանին քննադատող 14 բանաձեւերի համար՝ այդ փաստն անվանելով «մի տեսակ սեւեռուն գաղափար»:

Այն պահին, երբ նիստը վարողը պատրաստվում էր փակել քննարկումը եւ առաջնորդներին հրավիրել ճաշի, Եվրոխորհրդարանի խոսնակ Ռոբերտա Մեցոլան ձայն խնդրեց՝ Ալիեւին պատասխանելու համար:

«Եվրոպական խորհրդարանը ժողովրդավարական մարմին է, որն ընտրվում է ուղիղ քվեարկությամբ, որի բանաձեւերն ընդունվում են ձայների մեծամասնությամբ»,- հիշեցրեց նա:- Մենք երբեք չենք փոխի մեր աշխատանքային մեթոդները, նույնիսկ եթե դա ինչ-որ մեկի համար անհարմար կլինի»:

Մենք այսօր իսկ գտնվում ենք ցեղասպանական գործընթացի մեջ, ահազանգում է Գառնիկ Քերքոնյանը

⇨2 Քերքոնյանի խոսքով, 2023 թ. Արցախում տեղի ունեցածը այս գործընթացի վերջին փուլերից մեկն էր, եւ Սյունիքին վերաբերվող ծրագրերը՝ TRIPP-ն անգամ ներկայումս ընթացող ցեղասպանության ծրագրի մաս է կազմում, բայց ծրագիրը դեռեւս ամբողջական չէ: *«Շատ կարեւոր է, որպեսզի հասկանանք այսօրվա պահը՝ համատեքստի մեջ. այսօր մենք գտնվում ենք ցեղասպանության ընթացքի մեջ: Նույնիսկ հունիսի ընտրությունները այդ համատեքստում են, որ մենք պետք է հասկանանք»*:

*«**Հարմանալին այն է**,- ասում է նա,- **որ Ապրիլ 24-ին նշում ենք 1915-ի Հայոց ցեղասպանությունը, երբ մենք ինքներս ենթարկվում ենք ցեղասպանության՝ այսօր**: Անհավանական է, որ մինչեւ հիմա չենք կարողացել հասկանալ, թե այդ գործընթացը շարունակվում է եւ չի դադարում, նամանավանդ երբ չենք հասկացել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մեզ տրված ամենակարեւոր դասը առ այն, որ զիջումներով խաղաղություն չի գա: Դժվար դաս է, որ պետք է սովորել, որ պետք է ոտքի կանգնել եւ ասել՝ այս է իմ կարմիր գիծը: Այնինչ, պատմաբանները պիտի շատ դյուրությամբ տեսնեն, թե ի՛նչ էր ծրագրված 1980-ականներից ի վեր եւ ինչպես էր Թուրքիան աջակցում Ադրբեջանին: Ի՞նչ նպատակով, եթե ոչ՝ Հայոց ցեղասպանության քայլը առաջ տանելը մինչեւ այն աստիճան, որ հասել են իրենց Թուրանի ծրագրի վերջին 20-25 կիլոմետրին: Այդպե՞ս չի,-* հարցնում է նա:

«Եվ հետաքրքրականն այն է, որ դա գաղտնիք չէ: Իմ խոսքերը կարիքը չունեք լսելու, այլ՝ էրդողանի՛ խոսքերը. էրդողանը, երբ որ պատերազմից հետո Բաքվի զինվորական շքերթին էր մասնակցում, ինքը Նուրի փաշայի անունը բարձրացրեց եւ ասաց, որ Նուրի փաշայի հոգին հիմա արդարացել է: Սրանով ասված է, որ հանցագործները արդեն իսկ իրենց կատարած գործը լավ են հասկանում»:

Ինչպես գիտենք, 1918 թ սեպտեմբերի 14-ին եւ 15-ին Բաքու մտնելուց հետո Նուրի փաշան ձեռնարկեց քաղաքի հայերի էթնիկ զտումը եւ ձգտեց ոչնչացնել հայկական բնակավայրերը, մասնավորապես Արցախում, ինչպես նաեւ ենթարկեցնել Հայաստանի հարավային եւ արեւելյան սահմանները: Նուրի փաշայի հրամանատարությամբ թուրքական բանակի Բաքու մուտքը եւ այնտեղ անզեն հայ բնակչության կոտորածը մահամերձ Օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականության վերջին արարը հանդիսացավ: Այդ ընթացքում թուրքական եւ ադրբեջանական իշխանությունների կողմից իրականացված էթնիկ զտման արդյունքում սպանվել է մոտ 30,000 մարդ:

«Հաջորդ քայլը ո՛չ միայն Արցախը գրավելն էր, այլ նաեւ՝ Սյունիքը: Սա շատ պարզ է՝ հասկանալու համար, որպես զոհեր: Այո, զոհ ենք, մեր ազգը զոհ է. իմ սեփական կաշվին դա զգալու կարիքը չունեմ՝ արցախցու կաշվին արդեն զգացել եմ դա: Այդ դեպքերը՝ Մարաշի դեպքերը, Մարաշի հայերին չպատահեցին, այլ մեր ազգին պատահեցին: Եվ եթե դրա մեր հասկացողությունը մի քիչ ավելի ընդլայնենք եւ առաջ նայենք եւ հասկանանք, թե մենք ինչի առջեւ ենք կանգնած, ապա կտեսնենք, որ նույն պատմությունն է՝ ծրագրված պատմությունը»:

Քերքոնյանը ընդգծեց, որ եթե հայերի նկատմամբ շարունակվող բռնության ամբողջ շղթան պատշաճ կերպով չներկայացվի միջազգային հարթակներում, նման քաղաքականությունը շարունակվելու է: Այս համատեքստում է նաեւ կարեւոր, շեշտեց նա, որ համահայկական եւ միջազգային օրակարգում Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքը պետք է լինի առաջնահերթություն:

ՄԱՐԻԱՄ ԽԱԹԼԱՄՋՅԱՆ
Փարիզ

Վերոնիկ Կապոյան Ֆավել.
«Ժամանակի ընթացքում ազգանունս դարձավ հպարտության աղբյուր»

ԱՐԵՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-ՎԻԼՅՈՐԲԱՆ, Ֆրանսիա *- Վերոնիկ Կապոյան Ֆավելը (ծն.1959, Օբենա, Արդեշ) հայազգի ֆրանսիական դերասանուհի եւ բեմադրիչ է: Թատրոնում աշխատում է 1981-ից, համագործակցել է բեմադրիչներ Շանտալ Մորելի, Սերժ Պապագալիի, Ֆիլիպ Դելեգի, Պատրիկ Անրիի, Ժիլ Շավասյոյի, Գի Գրանույեի, Մոհամեդ Սահդ Ֆերդանի հետ: Զանազան դերեր է կատարել կինոյում եւ հեռատեսիլում, նկարահանվել Անրի Վեռնոյի, Կլոդ Շաբրոլի, Ալեքսանդր Ադաբաշյանի, Պատրիս Լըկոնտի, էրիկ Բարբիեի, Սոֆի Ֆիլիերի, Ժան Բեկերի, Ժերար Կրավչիկի եւ այլոց ֆիլմերում, բազմաթիվ հեռուստաֆիլմերում եւ սերիալներում:*

-Սիրելի՛ Վերոնիկ, եթե չեմ սխալվում ձեր առաջին թատերական հաջողությունը Սերժ Պապագալիի «Ազատված դոֆինուացին» հումորային ներկայացման մեջ էր, 1995 թվականին: Կարո՞ղ ենք ասել, որ դրանից հետո դուք նախընտրում եք կատակերգական դերերը:

-Այդ կատակերգությունն իր հաջողության շնորհիվ վերածվեց յուրատեսակ ընտանեկան սագայի, որը 1995-ից մինչեւ 2024 թվականն ունեցավ յոթ բեմադրություն, նաեւ դարձավ լիամետրաժ ֆիլմ: Միաժամանակ հանդես եմ եկել նաեւ մեկ այլ ներկայացման մեջ՝ «Ժիլի կինը», Շանտալ Մորելի բեմադրությամբ, որը ողբերգական մենաներկայացում էր եւ խաղացվել է ավելի քան 200 անգամ: Այս դերերի հակադրությունը հնարավորություն տվեց ինձ բացահայտել ու խորացնել այն բոլոր նրբերանգներն ու բազմազանությունը, ինչը կարող է երազել դերասանը: Չկա կատակերգություն առանց ողբերգության: Ողբերգությունը կարող է գոյություն ունենալ ինքնուրույն, սակայն այս երկուսը հաճախ շատ մոտ են իրար: Ես չեմ կարող ընտրել դրանցից մեկը կամ մյուսը.կատարման հաճույքը տարբեր է, բայց երկու դեպքում էլ այն անսահման է:

-Ո՞վ է ձեզ վրա, որպես դերասանուհի, թողել ամենամեծ ազդեցությունը:

-Ազդեցություններ շատ են եղել. բազմաթիվ արվեստագետներ սնուցել են ինձ: 1979-1980 թվականներին դիտածս Փարիզի Արեւի թատրոնի «Մեֆիստոն» իմ առաջին մեծ թատերական փորձառությունն էր: Ես հիացա, եւ **Արիան Մնուշկինը** դարձավ իմ առաջին ուղենիշը: Ավելի ուշ, մի վարպետության դասի ընթացքում, ներգրավվեցի խմբի աշխատանքի մեջ ու շատ բան սովորեցի, հատկապես այն հայտնի պարադոքսի մասին, որը կոչվում է «ողբերգական կատակերգություն»:

-Դուք մասնակցել եք Սփյուռքի հետ կապված մշակութային նախագծերի. կպատմե՞ք դրանց մասին:

-Իմ խմբի հետ բեմադրել եմ ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ, սակայն ժամանակակից հայ հեղինակները հազվադեպ են հայտնվել իմ ճանապարհին, միայն մեկ անգամ: Ապրիլի 24-ի ոգեկոչման ընթացքում հանրային ընթերցմամբ մասնակցելու հրավեր ստացա Վիլյորբանի քաղաքապետ Ժան-Պոլ Բրեից (ի դեպ, Վիլյորբանն Աբովյանի քույր քաղաքն է): Ես ներկայացրի **Գրիգոր Պըլտյանի**, **Մարինե Պետրոսյանի** եւ **Վիոլետ Գրիգորյանի** բանաստեղծություններից, նաեւ հատվածներ Ժերար Շալյանի «Հուշերիս հուշերը» գրքից: Ես հաճախ եմ վերադառնում այդ գրքին՝ գաղտնի մտածելով այն բեմադրելու կամ դրանից հատվածներ օգտագործելու մասին՝ միաժամանակ անդրադառնալու թե՛ ընդհանուր պատմությանը, թե՛ իմ տատիկ-պապիկի անձնական պատմություններին: Պետք է գտնել ճիշտ ձեւը: Այնտեղ կան խոսքեր, որոնք կարող էին իմը լինել. «Իմ մանկության սեւազգեստ ծեր կանայք հիշում էին. նրանք, ովքեր մահացան առանց գերեզմանի, հավերժ իրենցն են»: Եվ ի վերջո՝ երբ գալիս է ապրած տարիների հաշվետվության պահը, ժամանակն է հիշելու այս պատմությունը եւ մեր նախնիներին վերադարձնելու այն, ինչ իրենցն է:

-1950-1960-ական թվականներին Ֆրանսիայում հայկական ծագում ունեցող շատ արվեստագետներ փոխում էին իրենց ազգանունները՝ ընտրելով ավելի եվրոպական հնչողությամբ անուններ: Դուք կարող էիք հանդես գալ Վերոնիկ Ֆավել անունով, սակայն պահպանեցիք Կապոյան ազգանունը: Դա առաջացրե՞ց դժվարություններ:

-Մայրս ֆրանսուհի է, եւ ծնողներիս ամուսնությունը մնում էր մի մեծ գաղտնիք: Նրանք ամուսնացել են 1953 թվականին: Փարիզուհի մայրս հետեւել է ամուսնուն՝ տեղափոխվելով Արդեշի գյուղական շրջան (հետագայում մենք ապրեցինք Վալանսում), հորական տատիս՝ Մամե Զարիկի հետ, որը մեծացրել է ինձ: Ծնողներիս ամուսնությունը տեւել է 17 տարի: Մորս՝ նորմանդացի գյուղական ծագումով ընտանիքը դեմ է եղել այդ ամուսնությանը եւ բացահայտ ռասիզմ է դրսեւորել: Հայաստանը նրանց համար անհայտ երկիր էր, նրա լեզուն՝ անհասկանալի, խոհանոցը՝ տարօրինակ. նման դատողությունները շատ էին: Իսկ ես ուտում էի հայկական ուտեստներ եւ խոսում էի հայերեն (մինչեւ յոթ տարեկանս՝ ծնողներիս ամուսնալուծությունը): Իմ Կապոյան ազգանունը ժամանակի ընթացքում դարձավ դրոշ, հպարտության աղբյուր: Ինձ դուր էր գալիս իմ այդ յուրահատկությունը, այդ հեռավոր երկիրը, եւ տատիկիս ողբերգական պատմություններն ինձ տարան դեպի թատրոն՝ կենդանի զգացումների աշխարհ: Իմ մեծ ափսոսանքն այն է, որ այլեւս չեմ խոսում հայերեն: Տատիկիցս բաժանվելուց հետո լեզուն էլ նրա հետ անհետացավ: Կարող էի, պետք է կարողանայի, դեռ կարող եմ նորից սովորել... Կյանքն արագ է անցնում: Մի քանի բառ, սակայն, մնացել են:

-Ինչպե՞ս էր ձեր համագործակցությունը Անրի Վեռնոյի հետ «Պարադիի փողոց, թիվ 588» ֆիլմում:

-Շատ կարճ էր. փոքր էր դերս: Դա իմ երկրորդ փորձառությունն էր կինոյում: Ինձ կաշկանդված էի զգում Անրի Վեռնոյի, Կլաուդիա Կարդինալեի եւ Ռիշար Բերիի ներկայությամբ: Միշտ մտածել եմ, որ Վեռնոյն ինձ ընտրել էր իմ ազգանվան պատճառով՝ ելնելով հայկական համերաշխությունից: Հիշում եմ ֆիլմի ցուցադրությունը խմբի հետ. դահլիճը լցված էր Փարիզի հայ համայնքի ներկայացուցիչներով, եւ ցավալի հիշողությունների հուզականությունը շոշափելի էր: Իսկ հետո՝ սեղանների տեսարանները եւ մեր հայկական ուտեստները՝ ուրախության, հպարտության եւ հիացմունքի ալիքներով: Դա կարծես փոխաբերություն լիներ. խոհանոցն արտացոլում էր ողջ մնացած Հայաստանի առատաձեռնությունն ու կենսունակությունը:

-Դուք նաեւ նկարահանվել եք «Մադոյին՝ ցպահանջ» ֆիլմում, որը բեմադրել է հայազգի ռուսական բեմադրիչ Ալեքսանդր Ադաբաշյանը: Ձեր միջեւ հաստատվե՞ց ինչ-որ առանձնահատուկ կապ:

-Մեր կապը հիմնականում ստեղծագործական էր: Ես անցա քասթինգը, եւ մինչեւ նկարահանումները բազմաթիվ զրույցներ ունեցա Ադաբաշյանի հետ: Չգիտեմ, եթե ազգանունս ազդել է ընտրության վրա: Նկարահանումները շատ հաճելի էին, թեեւ որոշ բարդություններ կային լեզվական խոչընդոտի պատճառով, քանի որ ողջ տեխնիկական խումբը ռուսներ էին: Այդ շրջանից իմ մեջ մնացել են շատ լավ հիշողություններ՝ թե՛ թեթեւության, թե՛ պահանջկոտության առումով:

-Կպատմե՞ք Կապոյանների ընտանիքի մասին:

-Պապս՝ Օհաննես Կապոյանը (Հովհաննես Գաբոյան), ծնվել է 1880 թվականին, Բիլեջիկում եւ մահացել է 1955 թվականին, Օբենայում: Տատս՝ Զարիկ Յալարյանը (թե՞ Յայլարյան), ծնվել է 1890 թվականին Բիլեջիկում. Հակոբ Յալարյանի եւ Փարիս Թեփեյյանի դուստրն էր: Եթե ձեր ընթերցողներից որեւէ մեկը կրում է այս ազգանունները, ուրախ կլինեմ լսել նրանցից: Տատիկիս պատմություններից գիտեմ, որ նրա ծնողները Բիլեջիկի շրջանում զբաղվել են մետաքսագործությամբ: Նա եւ պապիկս ունեցել են վեց զավակ, որոնցից ամենափոքրը՝ իմ հայր Գալուստը, ծնվել է 1925 թվականին, Կ.Պոլսում: Նրանց երեխաներից երեքը մահացել են Պոլսի փախստականների ճամբարներում՝ հիվանդությունից, թերսնումից, ցրտից եւ զրկանքներից: Այս աքսորը կամ տեղահանությունը, որը սկսվել է 1915-1916 թվականներին եւ շարունակվել Պոլսի փախստականների ճամբարներում անցկացված տարիներով, հանգեցրել է գրեթե տասներեք տարվա թափառումների, մինչեւ նրանք 1928 թվականին հասել են Ֆրանսիա: Տատիկս, նրա ավագ դուստր Աստղիկը եւ հայրս (այն ժամանակ՝ չորս տարեկան) հասել են Մարսել, ապա հաստատվել են Սեն-Պիեռ-սու-Օբենայում՝ Բրիանի մետաքսի գործարանում աշխատելու, մինչդեռ պապս եւ դեռահաս Հակոբ հորեղբայրս մնացել են Թուրքիայում եւ հավանաբար զոհվել են: Աստղիկ հորաքույրս մահացել է Ֆրանսիայում՝ իր առաջնեկին լույս աշխարհ բերելիս, իսկ միակ զարմիկս՝ Ժոզեֆ Պողոսյանը, մահացավ Լիոնում, 2002 թվականին:

Ես հաճախ եմ մտածում, որ կարող էի ունենալ հորեղբայրներ, մորաքույրներ, զարմիկներ, ընտանեկան հավաքույթներ, ինչը տեսնում էի ուրիշ ընտանիքներում: Ես անսահման սեր եւ հիացմունք եմ զգում տատիկիս եւ նրա ուժի հանդեպ: Նա դիմակայել է աքսորին, հայրենիքի, տան եւ ընտանիքի կորստին, չորս զավակների եւ ամուսնու մահվանը եւ մի զավակի անհետացմանը: Նա կանգնել է չհասկացված լինելու անհնարինության եւ անծանոթ աշխարհին հարմարվելու անհրաժեշտության առջեւ: Նա ապրել է լեզվական մեկուսացման մեջ՝ լուռ աքսորում, իր հիշողություններով եւ հիշելու հանձնառությամբ: Այսօր ես այնքա՜ն հարցեր կունենայի նրան տալու: Հայրս՝ նրա միակ կենդանի մնացած զավակը, այժմ՝ հանգուցյալ, միշտ ասում էր. «Դա հին պատմություն է»: Հնարավոր է՝ նա չափազանց շատ էր դրանք լսել:

-Ինչպե՞ս եք ձեր կյանքում եւ արվեստում պահպանում հայկական ավանդույթն ու ինքնությունը:

-Առօրյա կյանքում ես հաճախ պատրաստում եմ հայկական ուտեստներ (ամուսինս դրանց մեծ սիրահար է): Ունեմ երկու դուստր, որոնք շատ զգայուն են մեր պատմության եւ խոհանոցի նկատմամբ: Իմ միակ եղբայրն ունի չորս զավակ, որոնցից երեքը տղաներ են, եւ ես գիտեմ, թե որքա՜ն երջանիկ կլիներ մեր հայրը՝ տեսնելով, որ Կապոյան ազգանունը շարունակվում է: Շատ տարիներ առաջ, երբ ես մասնակցում էի հանկարծաբանական մրցույթների Բատակլանում, հայրս եկել էր դիտելու: Հագիս մարզահագուստ էր, որի հետեւի մասում գրված էր իմ ազգանունը. նա շատ հպարտ էր. այդ երեկոն նրա համար ամենակարեւորն էր:

Արվեստը կարող է հաղթահարել նախապաշարմունքները: Այն կոչ է անում հանդուրժողականության, համակրանքի, գիտելիքի եւ ավելի խոր հարցադրումների: Մեր այս զրույցի շնորհիվ, որի համար երախտապարտ եմ, այժմ ցանկություն ունեմ ստեղծելու մի թատերական գործ այս պատմության շուրջ՝ իմ ընտանեկան եւ ավելի մեծ պատմության: Ինձ անհրաժեշտ են գործընկերներ, համախոհներ եւ ժամանակակից թատերական լեզու: Կարող եմ կրկնել ֆրանսիացի բանաստեղծի խոսքերը՝ «Ես մեկ այլ Արթյուր Ռեմբո եմ»...

Աշխարհի խոսքաշատ լռությամբ...

Հետաքրքիր զգացողությամբ ձեռքս վերցրի գրող, լրագրող **Մարիետա Խաչատրյանի** «Կյանքի կինոն» գիրքը, որը վերջերս տպագրվել է «Վան Արյան» հրատարակչությունում:

Ընթերցողի միտքը կլանող եւ յուրօրինակ, ինչ-որ տեղ խորհրդավոր են Մարիետա Խաչատրյանի իրապատումները եւ դրանց հերոսները:Կերպարները մեր իրականության մեջ ապրող, հեղինակին ծանոթ մարդիկ են, ասել է, թե՝ մարդիկ են մեր կյանքի կինոյից, որոնց մեջ նա գտել է այն, ինչ շատերը նույնիսկ չեն նկատի:

Հերոսների հույզերի ու ապրումների միջոցով հեղինակն ընթերցողի մեջ ձգտում է զարթնեցնել համամարդկային քնած լռությունը, մարդկային խիղճը, սրտացավությունն ու ապրումակցումը, սերն ու ազնվությունը, որոնցում ամփոփված են անցյալ եւ ներկա ժամանակների բախումը, սխալն ու ճշմարտությունը, որոնցից յուրաքանչյուրը ընկղմվել է մեր ժամանակների քաոսի եւ աղմուկի մեջ. դրանք ունեն հարցեր, որոնց պատասխանները տալիս է միայն կյանքի իմաստություն դարձած մեծն ժամանակը:

Պատմվածքների հերոսների կյանքն ու իր մտորումները շաղախելով՝ հեղինակը զրուցում է ընթերցողի հետ: Ընթերցողին այն զգացումն է պատում, որ պատումներին զուգահեռ՝ պտտվում է մի կինոժապավեն, որում ոչ միայն «Կյանքի կինո»-ի իր կերտած հերոսներն են, այլեւ յուրօրինակ գեղանկարչական այն աշխատանքները, որոնք ստեղծվել են ոչ միայն գրող, այլեւ նկարչուհի Մարիետա Խաչատրյանի վրձնի միջոցով: Գրքի սրտառուչ տողերի ու պատկերների նման, նրա գունակտավները նույնպես արարվել են իր հոգու եւ գույնի աշխարհից, մարդկային ապրումներից եւ տառապանքից, երջանիկ ակնթարթներից, մենության ներհայեցումներից:

«Կյանքի կինո»-ն ապրված ու իմաստնացած, փնտրտուքներով, հարցերով ու պատասխաններով լի մի աշխարհ է: Գրքի շապիկին պատկերված է անձրեւանոցով, կիսադեմով դեպի աջ նայող ու սպասող մի կին, անկասկած այդ կինը կյանքի ճանապարհին կանգնած հեղինակն է, նրա իսկ վրձնմամբ: Ո՞ւր է պատրաստվում, ի՞նչ է մտածում, ինչի՞ է սպասում... Գիտե միայն ինքը...

Բացում ես գիրքը՝ մուտք գործում, հետո խորասուզվում մի աշխարհում, որը հարազատ ու սիրելի է դառնում ոչ միայն հեղինակի շնորհիվ, այլ նաեւ նրա հերոսների ու նրանց կյանքի կինոաշխարհի: Յուրաքանչյուրի կողքին հեղինակը քայլում է իր քայլքով ու մտորումներով, իր հիշողությունների վերհուշով, ամենքի կորցրածով ու գտածով, հերոսների սրտի լեզվով ու նրանց աշխարհ թափանցելու հին բանալիների իր տրցակով: Յուրաքանչյուրի մտքերի աշխարհը բացելու համար նա ունի իր բանալին ու պատմությունները, արդարացումներն ու հանգամանքները, նա չի վախենում նոր մտքերի հետ առաջ շարժվել ու հասկանալ իր կերպարներին: Իր հերոսների հետ միայն ինքը գիտե, թե. «...հոգում ինչ փոթորիկներ են թաքնված, իր խորքերում ինչ ծածուկ կարոտ է մխում, ու այնտեղի թաքստարաններում ինչպես է շարունակում ապրել այն միակը, որին այդպես էլ թաղել չկարողացավ, ու այդպես կիսամեռ թողեց իր հոգու ամենահեռավոր ճեղքերում»:

Մարիետա Խաչատրյանն իր հիշողություններում փնտրում է մանկության հին տան բանալին, անցյալից մնացած հարցերի պատասխանները ու շաղկապում դրանք այսօրվա հետ, անգամ Արցախում հայ մարդու կորցրած տան բանալիներին հասնում: Նրա համար բանալին եւ նրա խորհուրդը երբեք չեն կորչում, դառնում են հիշողություն, կարոտ, սպասում, ապրեցնող հույս եւ մարդկային փակ հոգիները բացելու, խիղճը լսելի դարձնելու կարեւոր միջոցը.«...Ես շոյում եմ բանալիներն այնպես, ինչպես անցյալն են գուրգուրում...»:

«Երբեմն տարիներ են պետք, որ մարդ հասկանա իր իսկ սրտի լեզուն, իմանա, որ իր սիրտն ուրիշի մոտ է թողել, ու որ այդ ուրիշի սիրտն էլ իր մոտ է, իր ներսում, եւ ընդմիշտ»:

Սրտառուչ է կյանքի մասին վերլուծությունը: Հեռավոր անցյալում ռադիոտան բուֆետում վաղուց հուշ դարձած զրույցներից ու տարաբնույթ քննարկումներից, նկարահանումներից սկսած՝ մինչեւ գլավլիտների, սահմանափակումների ժամանակներ,երբ իրենք էլ երիտասարդ էին ու չէին ուզում հարմարվել, իսկ Արցախյան շարժման ժամանակ այդ կյանքն էլ ոչինչ թվաց:

«Ու դա, իրոք կյանք էր, կորուստներով, զրկանքներով լի, բայց իսկական կյանք:Բայց այն շարունակվում է նոր ընթացքով, փորձություններով, նոր պայթյուններով ու պատերազմներով, կեղծիքով ու լռություններով, նաեւ՝ «աշխարհի խոսքաշատ լռությամբ»:

Յուրօրինակ են նաեւ գրքում հիշողություն ունեցող կանգառների պատումները: Դրանք առնչվում են մարդկանց ու դեպքերի, կանգառներ՝ որոնք նույնպես կարող են շնչել, սպասել, հանդիպել ու կորցնել.«Կանգառը կյանքի ձեւ է՝ անցյալով, հիշողությամբ, հիշատակ արթնացնող մարտահրավեր որպես, ու... ներկայով, որ հետո այլոց հիշողությունն է լինելու»: Այստեղ է, որ մի ակնթարթ մտածում ես՝ ամեն ինչի շարունակական սլացք է՝ կյանքը, անկանգառ հոսող ժամանակը, որոնք Մարիետա Խաչատրյանի «կանգառաբանության» հետաքրքրական ու փիլիսոփայական վերլուծությամբ դառնում են ապշեցուցիչ, զարմացնելով, թե մի պարզ թվացող բանի մեջ որքա՜ն ապրող հիշատակներ կարող են լինել:

Մտորումների դեգերումներում եւ կյանքի փորձով առլեցուն՝ Մարիետա Խաչատրյանն իր համոզմունքներն ունի, իր ինքնակարգը,նա չի գերադասում տրորված արահետը, կեղծը, հեշտը: Նա հստակ տարբերակում է բառերի մանվածքից հյուսածո իր գիրը եւ ոճը, փայփայում է դրա շարվածքն անաղարտ եւ ամուր պահելու իր կերպը:

Ինչպես գրքի նախաբանն է հուշել՝ ընթերցողը գրքի պատմվածքներում կճանաչի իր շուրջն ապրող մարդկանց, միգուցե նաեւ ինքն իրեն, եւ գրքի հերոսների դժվար, ապրված, սրտով անցկացրած ժամանակն իրենը կհամարի, իսկ գրքի երկրորդ բաժնի բանաստեղծություններում կգտնի չափածոյի վերածված այն լուսավոր թախիծը, որը մեզ բոլորիս կապում է մեր մանկությանը, սիրուն, կյանքի թանկ հիշողություններին.

«Թե որ ձեռքս մեկնեմ,
Կհասնի պատրանքին,
Բայց երազն է բեկվել
Ուրի՛շ ժամանակի...

ՄԵՐԻ ՔԵՀԻՐՅԱՆ

Արտո Թունջբոյաջյանի «Քեզ համար, Արարատ»-ը՝ որպես արվեստի ինստալացիա

Երբ 2006 թ-ին Արտո Թունջբոյաջյանն ու Armenian Navy band-ը հայ հանրությանը ներկայացավ իր «Քեզ համար, Արարատ» (Heres to you Ararat) երգի տեսահոլովակով, չնայած նրան, որ այդ տեսահոլովակն իր բնույթով նոր ու ըստ էության հայկական երաժշտական տեսահոլովակների մեջ, դեռեւս անգերազանցելի նշածող դարձավ, երեւի թե քչերն անդրադարձան այնտեղ առկա ինստալացիային:

Այստեղ անդրադառնալու ենք ոչ թե Թունջբոյաջյանի երգին, որն ասես աղոթք լինի ուղղված դեպի Արարատ, այլ երգի տեսահոլովակում առկա ինստալացիային, որն ինքնին մեկ ամբողջական եւ ուշագրավ երեւույթ է հայ արվեստում:

Արարատ լեռը, որն իր մեջ ամփոփում է հայ ազգի ողջ ծագումնաբանությունը, մինչ օրս շարունակում է «Անհաս փառքի ճամփա մնալ», բայց, չնայած դրան, մեր ազգն այն՝ ինչպես

հարկն է, իրենն է համարում: Արեւմտահայաստանաբնակ Արտոն քաջատեղյակ լինելով դրանից՝ երգում է՝ «հիմա հասկանում եմ քեզ, ինչ ես դու հայոց համար...»: Երգի տեսահոլովակում արվեստագետ Արտոն, բազում, արդիական մեկնաբանություններով անդրադառնում է Արարատին ու այն ներկայացնում ամենատարբեր ձեւերում «Ամեն օր տարբեր ես դու, արիր տար ինձի ջան»: Այս տեսահոլովակը՝ նամանավանդ ներկայիս իրականությունում, հայերին հիշեցնում է այն փաստը, որ Արարատը հայ ազգի ծագումնաբանության անբաժան մասն է կազմում:

Ինստալացիան ամբողջանում է դաշտում (եւ ոչ միայն) Արարատի առաջ նստած մարդկանցով: Յուրաքանչյուր հայ, անկախ բնակավայրից, անկախ նրանից տեսել է Արարատը, թե՞ ոչ, անգամ անկախ կրոնական պատկանելիությունից մի նպատակ է հետապնդում՝ տեսնել Արարատն Անկախ Հայաստանի կազմում: Կլինի դա 10, 110, 1010 տարի հետո, էական չէ...

Armenian Navy Band-ը ստեղծել է պատմամշակութային եւ համահայկական արվեստի գործ, որը շուրջ քսան տարի հայ ազգի ու մշակույթի սրտում իր ուրույն տեղն ունի: Ինչպես ինքը Արտոն է ասում՝ «Աշխարհը մի ազգ Արարատին նայում իր հիմքը ըլլալով... հայեր»:

«Քեզ համար Արարատ»...

ՀՐԱՉՅԱ ԳԱԼՍՏՅԱՆ

Իմաստաբանական բառարան

Հորմուզի՞, թե՞ Որմիզդի նեղուց

Հորմուզի նեղուցը աշխարհագրական կարեւորագույն տեղանուններից է, որի ռազմավարական նշանակությունն առանձնապես ընդգծվեց Իրանի դեմ վերջին պատերազմի օրերին:

Նեղուցն իր անվանումն ստացել է համանուն կղզուց, որը գտնվում է դրա հարեւանությամբ: Գոյություն է ունեցել նաեւ Հորմուզ անունով քաղաք (ներկայիս Մինաբ քաղաքի մերձակայքում), որը Պարսկաստանի, Հնդկաստանի եւ Արաբական թերակղզու միջեւ առեւտրական կապերն ապահովող կարեւորագույն կենտրոններից մեկն է եղել:

Որոշ աղբյուրներ տեղանունը սխալմամբ բխեցնում են «հուր+մուղ» բառակապակցությունից՝ պնդելով, թե «մուղ» բառն արաբախոս տեղաբնիկների բարբառում նշանակում է արմավենի: Սակայն այս բացատրությունը գիտականորեն հիմնավորված չէ:

Իրականում «Հորմուզ» անվանումը ծագում է հնագույն մատենագրություններում հանդիպող «**Ահուրամազդա**» բառից, որը զրադաշտականության գերագույն աստծու անունն է: Այն առաջին անգամ գրավոր աղբյուրներում հիշատակվում է **Աքեմենյան դարաշրջանում** (մ.թ.ա. 550-330 թթ.)՝ Բեհիսթունի արձանագրություններում:

Նույն արմատից է առաջացել նաեւ «**Որմիզդ**» անունը (պարսկերեն՝ Հորմուզ), որը լայնորեն գործածվել է **Սասանյան** արքայատոհմում: Օրինակ՝ **Շապուհ** արքայի որդին կոչվել է **Որմիզդ**, **Ներսեհ** թագավորի որդին՝ **Որմիզդ Բ**, ինչպես նաեւ հայտնի են **Որմիզդ Գ** եւ **Որմիզդ Դ** թագավորները: Վերջինս **Արդարադատ Անուշիրվանի** (**Խոսրով Ա**) որդին էր:

Այս տարածված պարսկական անձնանունով է կոչվել նաեւ հայտնի նեղուցը, որը մենք, այլ լեզուների ազդեցությամբ, ընդունել ենք «Հորմուզ» ձեւով:

Կարծում եմ ժամանակն է վերանայել այդ կիրառությունը եւ «Հորմուզի նեղուց» ձեւի փոխարեն գործածել «Որմիզդի նեղուց» տարբերակը՝ ինչպես որ պարսկերեն հնչող մի շարք այլ տեղանուններ հայերենում ունեն իրենց ավանդական ձեւերը՝ Թավրիզ (Թաբրիզ), Սալմաստ (Սալմաս), Սպահան (Էսֆահան):

Հորմուզի նեղուցի վերանվանման հարցում ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփն** էլ իր ուրույն մոտեցումն ունի:

2026 թ. մարտի 28-ին Մայամիում տեղի ունեցած բարեգործական միջոցառման ժամանակ ԱՄՆ նախագահ Թրամփը Հորմուզի նեղուցն անվանել է «Թրամփի նեղուց»՝ անմիջապես դա համարելով լեզվի սայթաքում: Միեւնույն ժամանակ նա խոստովանել է, որ հազվադեպ է նման սայթաքումներ ունենում:

Եթե Թրամփը Հորմուզի նեղուցի փոխարեն, օրինակ, «Տոռմուզի նեղուց» ասեր, կարելի էր ենթադրել, որ նա իսկապես սայթաքել է: Սակայն նման ձեւակերպումը ավելի շուտ ակնարկում է գիտակցված խաղարկում: Հատկանշական է նաեւ, որ նրա լեզուն մի քանի անգամ «սայթաքել» է՝ «Արմենիա»-ի փոխարեն «Ալբանիա» ասելով, իսկ «Զանգեզուրի միջանցքի» փոխարեն՝ TRIPP:

Կարելի է ենթադրել, որ նման «սայթաքումները» կարող են շարունակվել, եւ մի օր էլ նրա մտքով կանցնի Պարսից ծոցը կոչել «Թրամփի ծոց», Խարք կղզին՝ «Թրամփի կղզի», իսկ Մեծ Թումբ, Փոքր Թումբ եւ Աբու Մուսա կղզիները՝ «Թրամփի եռյակ կղզիներ»:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ջոյել Վելդքամփ. «Մեզնից պահանջվող լավագույնը կներդնենք՝ համոզելու համար, որ արցախցին միայնակ չէ երկարատև պայքարում»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Մայիսի 8-ին «Ազգում» տպագրված «Շվեյցարական օրակարգում միշտ արդիական պահել Արցախի հարցը» հրապարակման շարունակությունը:

«Ո՞ր պայմանների պարագայում Ադրբեջանը պատրաստակամ կլինի ԼՂ հայերի հետ մասնակցել խաղաղության ֆորումին» հարցն ուղղեցինք շվեյցարացի պատգամավորներին: «Շվեյցարական խաղաղության նախաձեռնություն հանուն ԼՂ-ի» հանձնախմբի համանախագահ **էրիհ Ֆոնթոբելն** ի պատասխան մեր հարցի, ասաց. «Ադրբեջանն ինքնակամ սեղանի շուրջ բանակցելու չի նստի: Միջազգային ճնշում է հարկավոր: Այդ է պատճառը, որ ակտիվ ենք՝ միջազգային հանրությանը հիշեցնելու 2023-ին իր ձեւակերպածը, թե այստեղ խնդիր կա, որ լուծման է կարոտ»: **«Ո՞րը պետք է լինի Ձեր հաջորդ քայլը: Ինչպե՞ս հասնել նրան, որ հաջորդ նիստին ֆորումի, ԼՂ-ի հայերի իրավունքների թեմայի հանդեպ հետաքրքրությունն աճի»** հարցրինք պարոն Ֆոնթոբելին: «Լավ եւ արդարացի հարց է: Ամեն անգամ մտածում ենք, թե քաղաքական արդի հնարավորություններն մեզ ինչ են ընձեռում: Մեր մեծ նպատակն է, որ սույն հարցն աշխարհում ամեն տեղ միջազգային հանրության ուշադրության առանցքում լինի, հիշեցնենք, թե 2023-ի հոկտեմբերին ինչ էր ասում: Դրանից օրեր անց Գազայի իրադարձությունները եղան, եւ ԼՂ-ի հանդեպ մեդիայի ուշադրությունը կորսնվեց, մինչ օրս: Լռելու իրավունք չունենք, փոխարենը պետք է անընդհատ եւ ամենուր թեմայի մասին բարձրաձայնել՝ հույս տածելով, որ երբեւիցե Արցախի խնդրի հանդեպ եղած բոցը կտարածվի: Կարեւոր է, որ ոչ միայն մենք Շվեյցարիայում ակտիվ լինենք, այլեւ դուք՝ Հայաստանում՝ համարձակ գործելով: Լավ կլիներ, որ բոլոր կողմերը, կուսակցությունները միասնական մի գործի լծվեին»:

Շվեյցարացի պատգամավոր «Շվեյցարական խաղաղության նախաձեռնություն հանուն ԼՂ-ի» հանձնախմբի համանախագահ **Շտեֆան Մյուլլեր- Ալթերմատը** պատասխանելով մեր՝ վերոնշյալ հարցին, ասաց. «Պարզ է, որ Ադրբեջանն ինքնակամ խաղաղության ֆորումի չի մասնակցի եւ Ղարաբաղի հայերին չի ընդունի՝ իբրեւ բանակցությունների խոսակից: Դրա համար անհրաժեշտ է միջազգային զգալի ճնշում: Եվրոպական կողմից հազիվ թե տնտեսական կապերը թուլացնելու ցանկություն լինի, պատժամիջոցները դժվար թե ճնշման միջոց լինեն: Բարեբախտաբար Ադրբեջանի ռեժիմը արդեն բացասականին՝ քննադատությանը դյուրագրգիռ է արձագանքում: Պետք է հետագա հավելյալ ճնշում կիրառել՝ եվրոպական խորհրդարանի վերջին բանաձեւի ոճով: Ադրբեջանին պիտի հասկացնել տալ կատարածը, ոճրագործների վրա ավելի վատ որեւէ բան չի ազդում: Խաղաղության ֆորումը Բաքվի համար հնարավորություն պետք է լինի խաղաղություն հաստատելու իր հանձնառությունը ցույց տալու համար»: Շվեյցարիա- Հայաստան ընկերակցության պատվո նախագահ, Շվեյցարիայում հայկական եւ հայամետ ընկերակցությունների խորհրդի նախագահ **Սարգիս Շահինյանը,** որ **Գառնիկ Քերքոնյանի, Քրիստոնեական համերաշխության միջազգային** կազմակերպության հետ մարտի 18-ին Ժնեւում հրավիրված ասուլիսում քննադատելով Շվեյցարիայի գործադիրի՝ մեկ տարի անց ֆորում չգումարելու իրողությունը, ապրիլի 30-ի նիստը գնահատում է որպես շվեյցարական օրենսդիրի ամուր հանձնառության փաստ: «Ազգում» գրել ենք՝ այդ ասուլիսում Շահինյանը եւ Քերքոնյանը հաղորդեցին, որ ԼՂ ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախումբը բողոք է ներկայացրել SOCAR Trading SA-ի դեմ Շվեյցարիայում՝ ԼՂ հայության դեմ Ադրբեջանի արշավը ֆինանսավորելու գործում առկա դերակատարության համար: Դատարանն ընդունել է հայցը: Սարգիս Շահինյանը մեզ հետ զրույցում ընդգծում է, որ Արցախի ԱԺ նախագահ Աշոտ Դանիելյանի ելույթը՝ իրենց իրավունքների ոտնահարումը դիտարկել մարդու իրավունքների տեսանկյունից, հետապնդել ինքնորոշման իրավունքը, ընկալելի է եղել: Նաեւ ինքն է ելույթում ինքնորոշման մասին խոսել, նկատել տվել Կոսովոյի եւ Արեւելյան Թիմորի՝ Շվեյցարիայի ճանաչումը: Շահինյանն առաջարկել է նորացված բանաձեւով դիմել ԱԳՆ-ին, Շվեյցարիայի ԵԱՀԿ նախագահությունը հաշվի առնելով հիշեցնել Մոսկվայի մեխանիզմի մասին, որը ժամանակին ներկայացրել էր Ֆիլիպ Գալֆայանը: Նիստից ստացած տպավորությունների մասին խոսելով Շահինյանը կարծիք է հայտնում է, թե «պատգամավորները կարծես թե հակված էին ավելի շատ տեղեկություններ հավաքելու, քան դիրքորոշումներ ներկայացնելու»: Թե ինչ պիտի լինի հաջորդ քայլը, առաջիկայում ի՞նչ աշխատանք են նախատեսում, դեռ ուրվագծման կարիք ունի:

Շվեյցարահայ համայնքի անդամ, տարբեր հակամարտություններում, միջնորդական առաքելություններում իր գիտելիքը ներդրած փորձագետ **Աննա Հեսս Սարգսյանին** հարցրինք նիստից իր տպավորության, արդյունքի մասին: «Արդյունքը պիտի չափել սահմանված նպատակին համապատասխան: Նպատակը Շվեյցարական խաղաղության նախաձեռնության շրջանակներում արցախցիների այսօրվա խնդիրների մասին բարձրաձայնումն էր՝ ակնկալիքով, որ հետագա քայլեր կլինեն: Արդյունավետ է այն առումով, որ հարթակը կա, եւ արցախցիները կարողանում են իրենց հոգսերի մասին խոսել: Եթե դիտարկենք այն տեսանկյունից, որ վերադարձ լինելու է՝ վաղը, ապա արդյունավետ չի կարելի համարել: Բայց մեր նպատակն այն է, որ հնարավորինս կարեւոր ֆորմատներով Արցախի, արցախցիների ձայնը, մտահոգություններն ու խնդիրները լսելի դարձնենք: Դա հաջողվեց»: **«Հայությունը, շվեյցարահայությունն ինչպե՞ս պիտի օգնի, որ Արցախին ուղղված Շվեյցարիայի օրենսդրի, հանրության մարդասիրական հայացքը շարունակական լինի»** մեր հարցին ի պատասխան Աննա Հեսս Սարգսյանը նախ ուշադրություն սեւեռեց շվեյցարական ժողովրդավարական՝ առանձին անկախ գործող համակարգի վրա: «Եթե ԱԳՆ-ն շատ զգույշ է, հարգում է ՀՀ-ի եւ Ադրբեջանի՝ ֆորում հրավիրելը մերժելու, այն անպատեհ համարելու փաստը եւ դրանով հարցը փակում, օրենսդիրը շարունակում է իր գործը՝ առանց ճնշման ենթարկվելու: Եթե հաշվի առնենք, որ պառլամենտական Շվեյցարիայում ժողովրդի ընտրած պատգամավորներն օրակարգ են բերել ԼՂ հարցը, արդեն ներկայացուցչական է որոշակի չափով եւ շատ կարեւոր: Հավանական է, որ ֆորումը չլինի, բայց կարեւոր է հետեւյալ ուղերձը՝ պառլամենտականները ոչ միայն հարթակ են տրամադրում արցախցիների ձայնը լսելի դարձնելու համար, այլ ցույց են տալիս նաեւ, որ պարտադիր չէ, որ պատերազմ ուզենաս Արցախի մասին խոսելով: Այն պարագայում, որ թե՛Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս արդեն չի խոսվում Արցախի մասին, Շվեյցարիայում խոսվում է: Շվեյցարիայի պառլամենտականները հազարումի հարց ունեն օրակարգում, մեր գործը պետք է լինի Արցախի հարցն օրակարգում պահելը, հնարավորինս հստակ քայլեր ձեռնարկել կարեւոր երեք հարցերի լուծման ուղղությամբ՝ վերադարձ (որն այսօր իրականանալի չէ՝ քաղաքական, աշխարհաքաղաքական, ռազմական տեսանկյունից), գերիների ազատում եւ մշակութային ժառանգության պաշտպանություն: Շվեյցարահայությունն անընդհատ պիտի սնուցի պառլամենտի օրակարգը՝ վերոհիշյալ երեք հարցերի մասին արծարծմամբ, փոքր քայլերով: Մեծ հավակնություններով նպատակների իրականացումն իրական չէ: Օրինակ՝ Շվեյցարիայում ի՞նչ մեխանիզմներ կան, որ կկասեցնեն նյութական եւ ոչ նյութական ժառանգության ոչնչացումը: ԵԱՀԿ նախագահությունը ստանձնած Շվեյցարիան չնայած օրակարգում չունի Արցախի, ՀՀ- Ադրբեջան թեմաները, սակայն ոչ ֆորմալ՝ գերիների հարցով կարելի է համատեղ աշխատել: Փոքր քայլեր հնարավոր է անել: Հայություն ասվածը շատ լայն է, ենթատեքստները՝ տարբեր են, եթե Հայաստանի կառավարության, ղեկավարության օրակարգում այս հարցերը լինեին, բնականաբար շվեյցարահայության գործն ավելի հեշտ կլիներ: Հիմա փաստորեն շվեյցարահայությունն աշխատում է վակուումի մեջ, մեզ միակ աջակցող ուժն այս պահին Շվեյցարիայի պառլամենտականներն են, Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպությունը, Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախումբը:

Շվեյցարահայ համայնքի անդամ քաղաքագետ **Վիգեն Չըթրյանի** կարծիքով « ամենակարեւորն այդ աշխատանքի մեջ Արցախի հայության իրավունքներու հարցը ողջ պահելն է, շարունակել արծարծելը: Թե՛ Շվեյցարիայի խորհրդարանի այդ խումբը, թե՛ Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպությունը շատ մեծ, հսկայական կարեւորության աշխատանք կտանին: Այն հիմնված է իրավունքի եւ արդարության գաղափարի վրա, որ այսօր աջակցության խիստ կարիք ունին: Կանկնկալեի, որ ազգային ժողովի ավելի մեծաթիվ պատգամավորներ եւ լրագրողներ ներկա ըլլային այդ հանդիպման: Հուսով եմ հաջորդ քայլերուն կիրականանա»:

«Մեր անակնկալիքն իրականացաւ, Արցախի ներկայացուցիչներու պատուիրակութիւնն ընդառաջելով Ջուիցերիոյ խորհրդարանի հրաւէրին, ցոյց տուաւ, որ Արցախի հարցը փակուած չէ: Եւ իբրեւ Ջուիցերիոյ խորհրդարանի որոշումին արձագանք՝ պատրաստ է զայն լիակատար իրագործել», նիստի վերաբերյալ կարծիք հայտնեց Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախմբի անդամ **Մարիո Նալբանդյանը:** «Այլ երկիրներու խորհրդարաններ կրնան Ջուիցերիոյ որոշումին զօրակցութեան որոշումներ ընդունիլ. անգամ մը եւս արձանագրել, որ Արցախի հարցը չի կրնար լուծուած համարուիլ մարդկութեան դէմ յանցագործութեամբ, Ադրբեջանին ճնշել, որ ֆորումին մասնակցի»: **«Ո՞րն է առաջիկա ամենահրատապ քայլը Արցախի իրավունքների վերականգնման նպատակին հասնելու համար»** մեր հարցին ի պատասխան Նալբանդյանը նախ արցախցիների կազմակերպումը եւ համախմբումն է կարեւորում: Ապա՝ «միջազգային հանրութեան եւ քաղաքական շրջանակներուն իրազէկ պահել իրենց ոտնահարուած իրաւունքներուն մասին՝ իբրեւ ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդ եւ միջազգային օրէնքի համաձայն՝ իր վերադարձի իրաւունքը իրականացնելու անզիջող վճռականութիւն ունեցող: Ցեղասպանութիւնը միայն զանգուածային սպանդ եւ մահ չ՚ենթադրեր. յանցագործութիւն է նաեւ ցեղասպանութիւն կատարելու փորձը: Իսկ արցախցիներու վերադարձի իրաւունքն ամրագրուած է թէ՛ Արդարադատութեան միջազգային դատարանի որոշումով եւ թէ՛ շուրջ հինգ տասնեակ պետութիւններու եւ միջազգային կազմակերպութիւններու հրապարակային դիրքորոշումներով»:

Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախմբի անդամ **Գառնիկ Քերքոնյանը «**իրատեսական է» գնահատում նիստից ակնկալիքը: «Առաջնային նպատակը՝ Արցախի ժողովրդի իրավունքների հարցը մնա միջազգային օրակարգում: Փորձեցինք քննարկել եւ գտնել գործնական այնպիսի մեխանիզմներ, որ նույնիսկ առկա քաղաքական իրողությունների եւ օբյեկտիվ դժվարությունների պայմաններում կարող են խաղաղության նախաձեռնությունը տեղափոխել գործնական հարթություն: Մեզ համար կար–որ էր ոչ միայն քաղաքական հայտարարությունների մակարդակը, այլ նաեւ կոնկրետ քայլերի ձեւավորումը՝ միջազգային ներգրավվածության, երկխոսության – իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Որպեսզի խաղաղության ձեւաչափը կայանա, անհրաժեշտ է սկսել թեկուզ փոքր, բայց գործնական քայլերից, քանի որ հաճախ շատ դժվար է ապահովել հակամարտության բոլոր կողմերի քաղաքական կամքը միաժամանակ: Այդ պատճառով կարեւոր է, որ նման հարթակները շարունակեն գործել: Նույնիսկ, եթե սկզբնական փուլում դրանք կենտրոնանան ավելի փոքր եւ հումանիտար բնույթի հարցերի վրա: Այդպիսի համագործակցությունը կարող է աստիճանաբար ձեւավորել վստահության նվազագույն մթնոլորտ, ճանապարհ բացել ավելի լայն քննարկումների համար: Շատ կարեւոր է, որ այս նախաձեռնությանն աջակցություն հայտնեն հնարավորինս շատ միջազգային կառույցներ, խորհրդարանական շրջանակներ, իրավապաշտպան կազմակերպություններ»:

Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպությունը Բեռնի նիստից հետո Բաքվում հայ գերիներին անհապաղ ազատ արձակելու, արցախցիների հիմնարար իրավունքների ճանաչման, հուշարձանների պաշտպանության պահանջով նամակ էր հանձնել Շվեյցարիայի Համադաշնության նախագահ Գի Պարմելենին, որ մայիսի 4-ին Երեւանում մասնակցում էր Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ համաժողովին: Ի պատասխան մեր այն հարցի, թե **Ադրբեջանը ո՞ր պայմանով, ինչի՞ դիմաց կհամաձայնի մասնակցել ֆորումին, բանակցել արցախցիների հետ,** ՔՀՄ կազմակերպության հանրային պաշտպանության ղեկավար **Ջոյել Վելդքամփն** ասաց. «Ադրբեջանի քաղաքականությունն Արցախի հայերի հանդեպ ցեղասպանական էր եւ է: Բոլոր գործողությունները ցուցիչն էին այնտեղ հայ բնակչության կազմաքանդման:

⇨7

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ

Որո՞նք են Հայաստանի հնարավոր օգուտները ԵՄ գագաթնաժողովից

Երեւանում մայիսի 4-ին եւ 5-ին անցկացված եվրոպական երկրների առաջնորդների գագաթնաժողովը արժանացավ համաեվրոպական ուշադրության: Պատվիրակություններ համայն Եվրոպայից, գումարած Կանադայի վարչապետը եւ պաշտոնական դեմքեր Վրաստանից եւ Թուրքիայից հավաքվեցին Հայաստանում: Եվրոմիության եւ Կանադայի համատեղ մասնակցությունը ընդգծեցին մասնակիցների աճող տարակարծությունը ԱՄՆ-ի վարած քաղաքականության նկատմամբ: Իսկ ՆԱՏՕ-ի գլխավոր ղեկավարի ներկայությունը՝ ի հակադրություն Ամերիկայի բարձրաստիճան պաշտոնյաների բացակայության, է՛լ ավելի սրեցին այդ տարակարծությունները:

Միջոցառումը լայն արձագանք գտավ սկսած սոցցանցերում տեղի ունեցած հանրային քննարկումներից մինչեւ Ռուսաստանի նախկին վարչապետ **Դմիտրի Մեդվեդեւի** հնչեցրած կոպիտ արտահայտությունները եւ Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւի** ագրեսիվ ելույթը տեսակապով: Այս բոլորը դարձան հետագա բուռն քննարկումների եւ քննադատությունների թեմաներ:

Եվրոպական խորհրդի նախագահ **Անտոնիո Կոշտան** եւ եվրոպական հանձնաժողովի նախագահ **Ուրսուլա ֆոն դեր Լայենը** ներկայացնում էին Եվրոմիությունը գագաթնաժողովին, որը բացառիկ հնարավորություն ընձեռեց առավել խորացնելու ՀՀ-ԵՄ երկկողմ հարաբերությունները հատկապես մերձեցման, էներգետիկայի, տրանսպորտային ենթակառուցվածքների եւ թվային տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության բնագավառներում:

Հավաքի մասնակիցները քննարկեցին ներկա գլոբալ մարտահրավերները, ինչպես, օրինակ՝ վերջին զարգացումները ընդարձակված տարածաշրջանում՝ ներառյալ Ուկրաինայում եւ Միջին Արեւելքում դեռեւս շարունակվող ճգնաժամերի հետեւանքները: Վերջում նրանք համատեղ հռչակագիր ստորագրեցին եւ փոխանակեցին մի շարք ստորագրված փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են խորացնելու ԵՄ-ՀՀ գործընկերությունը:

Հետեւելով եվրոպական քաղաքական համայնքի հանդիպումներին՝ Կոշտան նշեց, որ Հայաստանի հյուրընկալությունը հզոր ազդանշան է աշխարհաքաղաքական այն խիզախ ուղղ, որը նա որդեգրել է եւ առաջ է տանում ԵՄ-ի հետ: Նա ավելացրեց, որ ՀՀ-ն ԵՄ-ին մոտիկ գործընկեր է եւ ԵՄ-ն ակնկալում է խորացնել այդ հարաբերությունները: Այս երբեւիցե կայացած առաջին գագաթնաժողովը Հայաստանում շրջադարձային կարեւոր նշանակության քայլ է եւ խոշոր ներդրում խաղաղություն, անվտանգություն եւ բարգավաճում ապահովելու Հարավային Կովկասում: Այդուհանդերձ, ոչ մի ձեւով նա չակնարկեց ԵՄ-ին Հայաստանի ամբողջական ինտեգրման մասին:

Մինչ Հայաստանը համարվում է մի մասնիկը եվրոպական համընդհանուր մեծ ընտանիքի, նա դեռեւս մտադիր չէ միանալու ԵՄ-ին կամ ՆԱՏՕ-ին, ոչ էլ դուրս գալու ԵԱՏՄ-ից կամ ՀԱՊԿ-ից: Նման հայտարարությունների բացակայությունը նշանակում է, որ ԵՄ-ին անդամակցելը ներկայիս կոնկրետ առաջնահերթություն չէ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում: Եթե այդպիսի նպատակ լիներ, ապա գագաթնաժողովը պատմական հարթակ եւ առիթ էր հստակորեն ձեւակերպելու այդ մտադրությունը եւ ապահովելու եվրոպական համընդհանուր աջակցություն:

Առանց այդ պարտավորվածության, ուրեմն, ի՞նչ շոշափելի օգուտներ է Հայաստանը ակնկալում ստանալ գագաթնաժողովից, բացի մեդիա ոլորտի արձագանքներից: Հայաստանը այս լծակը օգտագործելո՞ւ է առաջ տանելու իր ազգային շահերը, թե՞ կառավարությունը այն ծառայեցնելու է իր ներքին քաղաքական նպատակները իրագործելու համար, հատկապես նախընտրական այս շրջանում: Անձամբ ես հակված եմ մտածելու, որ վերջին ութ տարիների ընթացքում Հայաստանի իշխանությունները ոչ մի էական քայլ չեն կատարել կամ գործադրել Ռուսաստանի շահերի դեմ, նույնիսկ եթե այդ շահերը հակասել են Հայաստանի շահերին: Մինչ հռետորաբանությունը հաճախ լարված է պահել հարաբերությունները եւ արտահայտված տեսակետները տարբեր են եղել, մի փաստ, այդուհանդերձ, մնացել է անփոփոխ: Ամենաբարձր մակարդակում, այսինքն՝ ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** եւ ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինի** միջեւ անմիջական, ակտիվ հաղորդակցությունը հարատեւորեն շարունակվել է առանց ընդմիջումների: Կարելի է, ուրեմն, կրկնել, որ Հայաստանը չի գործել ընդդեմ Ռուսաստանի գլխավոր շահերի, դուրս չի եկել ԵԱՏՄ-ից կամ ՀԱՊԿ-ից: Ռուսաստանը պաշտոնապես մնում է Հայաստանի ռազմավարական դաշնակիցը, ռուսական զինվորական հենակետը շարունակում է գործել Հայաստանում, եւ Ռուսաստանը մնում է Հայաստանի գլխավոր առեւտրական գործընկերն ու արտահանման առաջնահերթ նպատակակետը:

Այնպես որ, եթե Հայաստանը ներկա կրիտիկական ժամանակահատվածում ԵՄ անդամակցության ցանկություն չի հետապնդում, նշանակում է այդ հարցը իր արտաքին քաղաքականության օրակարգում տեղ չի գրավում: Մոսկվան այդ առումով մտահոգվելու քիչ պատճառ ունի: ԵՄ-ին անդամակցելու քննարկումները հավանաբար կմնան հռետորական մակարդակներում եւ կոնկրետ գործողությունների չեն վերածվի: Միեւնույն ժամանակ նման գործընթացները կարող են ծառայել ապահովելու հանրային բարենպաստ կարծիք վարչապետ Փաշինյանի եւ նրա իշխանության հանդեպ:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Arm. Mirror-Spectator)

Գաղտնի այցեր եւ հարվածներ. ինչպես ԱՄԷ-ն ու Սաուդյան Արաբիան...

⇨1 Իրանի արտաքին գործերի նախարարությունը չի արձագանքել Reuters-ի հարցմանը, իսկ Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյան ոչ հաստատել, ոչ էլ հերքել է այդ տեղեկությունը:

Հայտնի է, որ պատերազմը, որը սկսվել է փետրվարի 28-ին ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանին հասցված հարվածներից հետո, աստիճանաբար տարածվել է Պարսից ծոցի երկրներ:

Հաղորդվում է, որ Իրանը հրթիռներով եւ անօդաչու թռչող սարքերով թիրախավորել է Պարսից ծոցի համագործակցության խորհրդի բոլոր վեց անդամ պետությունները, ինչպես նաեւ հարձակվել քաղաքացիական ենթակառուցվածքների, օդանավակայանների եւ նավթային օբյեկտների վրա՝ բացառությամբ ամերիկյան ռազմական բազաների:

Հաղորդագրության մեջ նշվում է նաեւ, որ Սաուդյան Արաբիան հարձակումներից հետո տեղեկացրել է Իրանին իրականացված գործողությունների մասին, ինչից հետո երկու երկրների միջեւ սկսվել են ինտենսիվ դիվանագիտական շփումներ:

Իրանցի եւ արեւմտյան պաշտոնյաները Reuters-ին հայտնել են, որ էր-Ռիադի՝ հետագա հարձակումների վերաբերյալ նախազգուշացումները, ի վերջո, նպաստել են երկու երկրների միջեւ լարվածության թուլացմանը:

Միջազգային ճգնաժամային խմբի իրանական նախագծի տնօրեն **Ալի Վաեզը** Reuters-ին ասել է, որ Սաուդյան Արաբիայի պատասխան հարվածները եւ դրան հաջորդած պայմանավորվածությունները վկայում են երկու կողմերի պրագմատիկ մոտեցման մասին:

Reuters-ի փոխանցմամբ՝ լարվածության նվազեցման գործընթացը սկսվել է Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ ապրիլի 7-ին կնքված հրադադարի մասին համաձայնագրից մեկ շաբաթ առաջ:

Ըստ Reuters-ի՝ իրանցի պաշտոնյաներից մեկը գործակալությանը հայտնել է, որ փոխըմբռնման նպատակն է դադարեցնել ռազմական գործողությունները, պաշտպանել փոխադարձ շահերը եւ կանխել լարվածության հետագա սրումը:

Reuters-ը նաեւ նշել է, որ Իրանը եւ Սաուդյան Արաբիան՝ տարածաշրջանի շիա եւ սուննի ուղղությունները ներկայացնող հիմնական տերությունները, վերջին տարիներին տարածայնություններ են ունեցել մի շարք տարածաշրջանային հարցերի շուրջ, սակայն 2023 թվականին Չինաստանի միջնորդությամբ վերականգնել են դիվանագիտական հարաբերությունները:

Հաղորդագրության մեջ նշվում է նաեւ, որ Սաուդյան Արաբիան մարտի վերջին շաբաթներին սպառնացել է շարունակել ռազմական գործողությունները, եթե հարձակումները չդադարեցվեն:

Ըստ Reuters-ի՝ Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար Ֆեյսալ բին Ֆարհանը մարտի 19-ին հայտարարել է, որ էր-Ռիադն իրեն իրավունք է վերապահում անհրաժեշտության դեպքում ռազմական գործողություններ ձեռնարկել:

Զոյել Վելդքամփ...

⇨6 Մենք չենք ակնկալում, որ Ադրբեջանն ինքնակամ համաձայն կլինի Արցախի հայերի ներկայացուցիչների հետ մասնակցելու խաղաղության ֆորումին: Անհրաժեշտ է, որ միջազգային հանրությունը՝ մասնավորապես ԱՄՆ, ԵՄ-ն եւ ՌԴ-ն ճնշեն Ադրբեջանին, որ հրաժարվի ցեղասպան քաղաքականությունից, կատարի Միջազգային դատարանի որոշումը՝ ապահովի արցախահայերի անվտանգ, անարգել, արագ վերադարձը: Այդ իրավիճակում Շվեյցարիայի կողմից կազմակերպվող խաղաղության ֆորումը՝ միջազգային աջակցությամբ եւ վերահսկողությամբ, կլինի կենսունակ միջոց Ադրբեջանի եւ արցախահայերի միջեւ՝ մանրամասների մասին բանակցելու համար: Ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակը դրան չի նպաստում: Սակայն այն կարող է արագ փոխվել: Գրեթե 5 տարի է, ինչ ԱՄՆ-ն, ՌԴ-ն եւ ԵՄ-ն ձգտում են հզորացնել Ադրբեջանին, որ թեեւ կատարելագործվել է հասարակայնության հետ կապերի հարցում, բայց մնում է պարանոիդ, ցեղասպան, ընտանեկան բռնապետություն: Ադրբեջանը չի լինի երկարաժամկետ հուսալի գործընկեր ԱՄՆ-ի, ՌԴ-ի կամ ԵՄ-ի համար, կգա այն օրը, երբ այս տերությունները կունենան ընդհանուր շահագրգռություն՝ Ադրբեջանին վերահսկելու հարցում: Երբ դա լինի, անհրաժեշտ կլինի, որ վերադարձի իրավունքը Հարավային Կովկասի միջազգային օրակարգում լինի: Հավատում ենք, որ Շվեյցարիայի խաղաղության նախաձեռնությունը միջոց է՝ ԼՂ հարցն օրակարգում պահելու համար»:

ԵՄ քաղաքական վերնախավը Երեւանում էր, կրկնում էր եվրոպական արժեքներին հավատարմության, դրան խարսխված քաղաքականության մասին: Կարծես մոռացվում է, որ այդ արժեքները քրիստոնեական են: Բարձրաձայն չխոսվեց Արցախի, այնտեղից բռնագաղթի ենթարկված հայերի իրավունքների, Բաքվում պահվող գերիների ազատարձակման, քրիստոնեական մեր ժառանգության ոչնչացման կասեցման մասին: Այս պայմաններում ինչպե՞ս պիտի արցախցին լսելի դարձնի իր իրավունքի մասին պահանջը: Մեր այս երկրորդ հարցին Զոյել Վելդքամփի պատասխանը շատ հանգամանալից է. «Արցախահայերի համար չափազանց դժվար է իրենց ձայնը լսելի դարձնելը ոչ թե այն պատճառով, որ նրանք վատ են կատարում այդ աշխատանքը, այլ՝ նրանց հարցը չի արժանանում մեծ տերությունների հավանությանը: Քրիստոնեական արժեքներն ու մարդու իրավունքների արժեքը նվազ նշանակություն ունեն ամերիկյան եւ եվրոպական արտաքին քաղաքականության մեջ: Այնուամենայնիվ, շատ տպավորված էի մայիսի 4-ին Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի ժամանակ կազմակերպված ցույցերով, բազմաթիվ այլ գործունեությամբ, որ Արցախի համայնքի առաջնորդներն ու նրանց համախոհները ձեռնարկեցին դրան նախորդող շաբաթներին: Արցախահայերը չպետք է հուսահատվեն, երբ նման ցույցերը արագ արդյունք չեն երեւակում: Նրանք պետք է շարունակեն իրենց ձայնը լսելի դարձնել եւ ռազմավարական պահն օգտագործեն՝ աշխարհին հիշեցնելու իրենց արդարացի պահանջների մասին: Նրանք պետք է կառուցեն համայնքային նոր ինստիտուտներ, պահպանելով արդեն ունեցածները, հատկապես՝ իրենց սահմանադրական կառավարումը: Նրանք պետք է շարունակեն արդարադատության համար դիմել միջազգային ատյաններին, օրինակ՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի մեջ գործողներին: Ամենակարեւորը՝ նրանք պետք է պատրաստվեն երկարատեւ պայքարի: Քաղաքացիական հասարակության ինստիտուտը հանձնառու է երկարաժամկետ աջակցել այս գործին, մեզնից պահանջվող լավագույնը կներդնենք՝ համոզելու համար, որ նրանք միայնակ չեն պայքարում»:

«Մեծերը եւ Միւսները»*

«Մեծերը եւ Միւսները»*

105 ԱՄԵԱԿ

ՄՈՒՏՔ

Հայաշխարհի մէջ ազգային կեանքով ապրող հայորդիներէն ո՛չ մէկուն համար գաղտնիք է, թէ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը վերջին աւելի քան 30 տարիներուն կ՛ապրի իր պատմութեան ամենաթշուառ օրերը, իր բազմաշերտ եւ հակոտնեայ բաժանումներով:

1990ականներէն ի վեր, իբր թէ սերնդափոխութեան պատրուակով «ընտրուած» եւ անկէ ետք կանոնադրական զանազան խախտումներով ինքզինք կուսակցութեան ղեկավարութիւն կոչող խմբակ մը անկումէ անկում կ՛առաջնորդէ ազգային արժէք հանդիսացող՝ պանծալի անցեալ եւ հայ իրականութեան մէջ կենսական դեր ունեցող՝ մեր սիրելի կուսակցութիւնը:

«ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ»Ի ՀԻՆ-ՆՈՐ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Վերջերս, այսպէս կոչուած ներքին շրջաբերականէ մը իմացանք, որ իւրաքանչիւր քանի մը տարին մէկ խեղկատակութեան համազօր բեմադրութիւններով նոյն՝ մշտապէս ինքզինք վերարտադրող խմբակը դարձեալ կը ծրագրէ ընթացիկ տարուան մայիսի վերջը գումարել այսպէս կոչուած ՌԱԿ ընդհանուր պատգամաւորական ժողով մը:

Ճիշտ այն ժամանակամիջոցին, երբ թէ՛ մեր կազմակերպութեան մէջ իր դիրքով եւ թէ՛ իր անձնական արժանիքներով «Մեծեր»-էն համարուող անձնաւորութիւն մը, յանձին՝ Դոկտ. Արշաւիր Կէօնճեանի, ի տես մեր ազգն ու Մայր հայրենիքը յուզող տագնապալից այս օրերուն, իր հանգամանքին յարիր պատասխանատուութեան գիտակցութեամբ՝ Միասնականութեան կոչ կ՛ուղղէր բոլորիս, «Միւսները»՝ իրենց նենգ ու ճղճիմ նկարագիրն ու կուսակցակործան ընթացքը աւելի եւս բացայայտող հաւաք մը դարձեալ կը փորձեն կազմակերպել՝ անունը դնելով «Պատգամաւորական Ժողով», աւելի եւս պառակտելու համար մեր սիրելի կուսակցութիւնը:

ՅԻՇԵՑՈՒՄԻ ԿԱՐԳՈՎ

«Միւսները» ներկայացնող նշեալ խմբակը աւելի քան 30 տարիներ առաջ, ինքնահաստատումի իր ապիկար փորձին մէջ կուսակցութենէն իբր թէ փորձեց հեռացնել արժանաւորապէս «Մեծերը» հանդիսացող ղեկավարներ, որոնց անուններ միաձուլուած եւ նոյնացած էին Ռամկավար Ազատական Կուսակցութեան անունին եւ իր արդի պատմութեան հետ:

Այս խմբակը չբաւարարուեցաւ այդքանով, այլ՝ փորձեց սփիւռքի զանազան երկիրներու մէջ գործող մեր կուսակցութեան եւ անոր ուղեկից Թէքէեան Մշակութային Միութեան շրջանակներուն մէջ երկփեղկումներ յառաջացնել, կուսակցապատկան եւ միութենապատկան թերթեր փորձել իւրացնել, համախոհ հաստատութիւններ փակել, ազնիւ ընկերներ մոլորեցնել կամ խրտչեցնել, անկախ Հայրենիքի մէջ լուրջ զոհողութիւններով հիմնադրուած եւ մեծ ժողովրդականութիւն վայելող մեր առաջատար թերթ՝ «Ազգ»-ին շուրջ դաւեր հիւսել:

Նոյն խմբակին հակոտնեայ անդամները 2000ական տարիներուն, իրար մէջ քինախնդիր եւ անձնական հարցեր լուծելու համար երկու տարիով դադրեցուցին «Զարթօնք» օրաթերթը, հակոտնեայ դատերով վտանգեցին Պէյրութի Թէքէեան Կեդրոնի գոյութիւնը, Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանի վերելքին նպաստող տնօրէններ, ըստ իրենց քմահաճոյքին, պաշտօնանկ ըրին՝ խաթարելով մեր սիրելի վարժարանին գոյերթն ու ակադեմական մակարդակը, եւ իրենց այդ արարքներուն մասին փոխանակ ամչնալու՝ ուրախացան եւ հպարտացան, կէտեր արձանագրել կարծելով իրարու դէմ:

Միշտ միեւնոյն խմբակը ամէն ինչ ըրաւ ծախողցնելու մեր կուսակցութիւնը միացնելու իւրաքանչիւր նախաձեռնութիւն: Վերջինը, դարձեալ վաստակաւոր ընկերներ՝ Արշաւիր Կէօնճեանի եւ այժմ արդեն հանգուցեալ Երուանդ Ազատեանի կազմակերպած նախաձեռնութիւնն էր, կուսակցութեան նախկին ատենապետներու մասնակցութեամբ: Պատմութեան եւ մարդկային խիղճի հանդէպ ազնիւ փորձ մըն էր այն, որ իր հերթին ծախողութեան մատնուեցաւ վերոյիշեալ նոյն խմբակին եւ անոր արբանեակներուն նենգութիւններուն հետեւանքով:

Քանի մը ամիս առաջ նշեալ խմբակը դոն քիշոթեան նոր արկածախնդրութեան մը ձեռնարկեց: Արդէն շուրջ 90 տարիներէ ի վեր պատուով գոյատեւող եւ այս օրերուն աշխարհասփիւռ ընթերցողներու մէջ լայն տարածում ունեցող եւ զանազան ծրագիրներ իրագործող «ԶԱՐԹՕՆՔ» օրաթերթին զուգահեռ՝ նոյնանուն կեղծ թերթիկ մը փորձելով հրատարակել Պէյրութ մէջ: Լկտի քայլ մը, զոր առնուազն կարելի է կոչել անամօթութիւն՝ Հայաստանեան մեր հայրենիքին, ծննդավայր Լիբանանին, մեր ժողովուրդին եւ ընդհանրապէս աշխարհին դիմագրաւած օրհասական այս օրերուն, երբ մենք բոլորս կը դիմագրաւենք գոյութենական հարցեր: Մինչ մեր ապրած տարածաշրջանը կ՛ապրի աննախադէպ դժուար օրեր, ներքին ճակատի վրայ փոխանակ համախմբուելու եւ միակամ աշխատելու, եւ ինչու չէ՝ բարելաւելու եղածը, խաւարի ասպետներ կը շարունակեն խափանարարական իրենց սեւ գործը, գուցէ նիւթապէս հրապուրելով Լիբանանի մէջ տնտեսական ճգնաժամ դիմագրաւող ընկերներ, որոնց անունը օգտագործելով, ինչպէս նաեւ ներքին ճակատի վրայ կարգ մը մեղսակիցներու հնարաւորութիւններէն օգտուելով, կը փորձեն յառաջ տանիլ իրենց սիրած սեւ գործը, զոր դաւադրական տեսանկիւնէ դիտած՝ կարելի է կոչել նաեւ հայ ժողովուրդի թշնամիներուն պատուէրով ստանձնուած «առաքելութիւն» կամ ազգակործան յանձնառութիւն:

ԱԶԳԱՅԻՆ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԽՈԲՈՒՆԿ ՃԵՂՔ

Մինչեւ վերջին 8 տարիները մեր կուսակցութեան պառակտումի հիմնական պատճառը կարելի էր նկատել իբրեւ անձնական քինախնդրութիւն եւ ընդհանուրը՝ անձնականին զոհելու յոռի նկարագրի տէր մարդուկներու լկտի պահուածք: Այսօր սակայն, մեր եւ խնդրոյ առարկայ այդ խմբակին միջեւ գոյութիւն ունի ազգային-գաղափարական ուղղահայեաց եւ հորիզոնական ճեղք մը:

Արտաքին ուժերու եւ, ինչու չէ, նաեւ թշնամի կողմերու ի շահ քաղաքական տարբեր պատուէրներ կատարելու միշտ պատրաստ այդ խմբակին այսպէս կոչուած առաջնորդներն, այսօր մօտէն կը գործակցին, պատմական թիւրիմացութեամբ մը, մեր Հայրենիքին իշխանութիւնը ձեռք ձգած իշխանութիւններուն հետ: Հետեւաբար նման մարդոց հետ ունինք սկզբունքային խնդիրներ: Բան մը՝ որ աւելի եւս կը դժուարացնէ ներկուսակցական լուծումներու ձեռնարկումը, քանի կարելի չէ ձեռք մեկնել Արցախը յանձնած, Հայոց Ցեղասպանութիւնն ու մեր Սուրբ Արարատի հայկականութիւնը հարցականի տակ դնող կողմի հետ գործակցող խմբակի մը հետ:

Մենք կը հաւատանք, որ ժամանակն է ամէն բան իր տեղը դնելու: «Մեծեր»-ու անուններն են, որ պիտի յաւերժանան, մինչ «միւսները»՝ իրենց մանկլաւիկներով ու պաշպանեալներով մէկտեղ՝ խմբովին պիտի յայտնուին պատմութեան աղբանոցին մէջ:

ԽՍՏԻՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՒ ԿՈՉ

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի շրջանակս խստիւ կը դատապարտէ անցեալի թէ ներկայ կուսակցաքանդ գործելաոճի ամէն դրսեւորում եւ կոչ կ՛ուղղէ աշխարացրիւ մեր բոլոր ընկերներուն՝ համախմբուելու մեր սիրելի կուսակցութիւնը, կամ այն՝ ինչ «միւսները» ձգած են, որ մնայ անկէ:

Մեր կուսակցութեան 105ամեայ երթը ամէն գնով շարունակելու անշեղ խոստումով՝

Կեցցեն՝ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը եւ իր ուղեկից Թէքէեան Մշակութային Միութիւնը:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱԿ

** Մեր սոյն յայտարարութեան վերնագիրը փոխառած ենք Անդրանիկ Ծառուկեանի «Մեծերը եւ Միւսները» հատորէն, ուր ան զուգահեռ համեմատականով կը նկարագրէ ազգային կեանքի մէջ իրաւ Մեծերը, ինքզինքնին մեծ կարծող ու այդպէս ալ ձեւացնող Միւսներուն հետ:*

Ճիշդ 30 տարի առաջ, մօտաւորապէս այս օրերուն, Հայաստանի արդարադատութեան նախարարութիւնը, փոխնարար Գագիկ Ճհանկիրեանի, ՀՀՇ այն ժամանակ ազդեցիկ ղեկավարներէն (այժմ հանգուցեալ) էտուարդ Եգորեանի, Տէր Յուսիկի եւ այլոց ջանքերով կը դադրէր «Ազգ» օրաթերթին հրատարակութիւնը, որ այդ օրերուն նորանկախ Հայաստանի առաջատար եւ ազդեցիկ թերթերէն էր՝ օրական մօտ 45 հազար տպաքանակով: Ազդեցիկ՝ նորանուն հրապարակախօսներու գրիչով, երիտասարդ լրագրողներու թարմ մօտեցումներով: Այժմ, 30 տարի յետոյ, նոյնը կը պատահի տարբեր մթնոլորտի ու պայմաններու եւ բոլորովին տարբեր հանգամանքներու տակ, բայց ատելավառ փառասիրութեան նոյն դրդապատճառներու հետեւանքով: Այս անգամ «զոհը» Պէյրութի ՌԱԿ պաշտօնաթերթ «Զարթօնք» օրաթերթն է՝ Վահան Թէքէեանի, Յովհաննէս Պօղոսեանի, Գերսամ Ահարոնեանի խմբագրած թերթը՝ իր 90-ամեայ յոբելեանի շեմին: Գրեթէ նոյն մարդիկն են, 30 տարի ծերացած ու բնաւ չիմաստնացած: Մէկ առ մէկ կրնամ տալ անունները այդ «հերոսներուն», որոնք 30 տարի առաջ նոյն «սկզբունքով» փորձեցին փակել «Ազգ»ի ընթացքը եւ 13 օր կեղծ «Ազգ» հրատարակելէ ու դատարանին վճիռով իրենց բերանները գոցելէ ետք, ահա այսօր, չխրատուած՝ նոյնը կը կրկնեն «Զարթօնքի» դէմ: Այս մարդիկ, արդարեւ, անյուսալիօրէն մոլորուած են, բայց կը շարունակեն նոյն յիմարութիւնը ինքնափառաբանութեան, քանզի չունին զիրենք փառաբանողներ, հետեւորդներ, աջակիցներ, նոյնիսկ իրենց կնիկներուն մէջ: Այս մարդիկ, ինչպէս 30 տարի առաջ, բնաւ չեն հասկցած, թէ ինչ վիճակի մէջ կը գտնուի իրենց հայրենիք Հայաստանը, ի՛նչ տագնապներու մէջ կը գտնուի աշխարհատարած մեր ժողովուրդը համաշխարհային ներկայ թոհուբոհին մէջ եւ վտանգաւոր ի՛նչ աղէտներ կը սպասեն մեզի, սակայն կը շարունակեն զբաղիլ իրենց նեղ անձնական փառասիրութիւնը շոյելով, որ այլեւս ոչ մէկը կը հետաքրքրէ, նոյնիսկ՝ իրենց մտերիմները:

Ճշմիմ մարդիկ, տօքթոր-մօքտորի փետուրներով, որոնք չունենալով որեւէ միջոց որեւէ բան ստեղծելու, ահաւասիկ, երկրորդ անգամ կը փորձեն թերթ փակել, թերթ գոցել, անգամ մը եւս խայտառակել թերթ, մամուլ, լրատուամիջոց ստեղծելու աւանդութիւն ու փորձ ունեցող մեր կուսակցութիւնը, արդէն 105 տարուան պատմութիւն ունեցող մեր ՌԱԿ-ը:

Ստորեւ հրատարակուող յօդուածը, Անդրանիկ Ծառուկեանի «Մեծերը եւ միւսները» պատմական ու բնորոշիչ վերնագրով, կը ներկայացնէ, թերթ ստեղծողներու եւ թերթ գոցողների հակադրութեամբ, այն դժբախտ պատկերը, որ կը տիրէ այսօր Ռամկավար կուսակցութեան ներսը, օտարերկրեայ մի քանի գործակալներու եւ անոնց խաբուած գործակատարներուն մեղսակցութեամբ:

Մեծերը անոնք են, որոնք միշտ միասնականութիւն կը ստեղծեն մեծ գործերու շուրջ, իսկ միւսները անոնք՝ որոնք քանդիչ, պառակտիչ, ճղճիմ գործերու հետամուտ են:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան Լէ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԷՔԷՅԱՆ»
սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն((գովազդ)
հեռ..**010 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով,,առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են,համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի::
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 14.05.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրւում է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատանը, ք. Երեւան, Բաղրամյան 3: